REL-B
ANON
1906

ԱՒԵՏԱՐԱՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ԻՒՂԱԲԵՐԻՑ,

Հանգստեան, Բժշկութեան, Տաճարի, Խաչելութեան, Անդաստանաց,

Քառանօրեայ Գալստեան, Մ. Զատկի, Խաչվերացի

եւայլն եւայլն.

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ

1906

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՉՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

Ամենայն Հայոց

ԱՒԵՏԱՐԱՆՔ ՀԱՆԳՍՏԵԱՆ

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս:

բկ. գկ. Յայնմ ժամանակի պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. գոհանամ զքէն, Հայր, Տէր երկնի եւ երկրի. զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ի գիտնոց, եւ յայտնեցեր տղայոց։

Այո, Հայր, զի այսպէս հաճոյ եղեւ առաջի քո։

Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմմէ։

Եւ ոչ ոք ճանաչէ զՈրդի եթէ ոչ Հայր, եւ ոչ զՀայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ Որդի. եւ ում Որդին կամիցի յայտնել։

Եկայք առ իս ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք եւ ես հանգուցից զձեզ. առէք զլուծ իմ ի ձեզ, եւ ուսարուք յինէն՝ զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւ. եւ գտջիք հանգիստ անձանց ձերոց։

Զի լուծ իմ քաղցր է, եւ բեռն իմ փոքրոգի։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս:

Այլ առակ արկ առ նոսա՝ եւ ասէ. նմանեցաւ արքայութիւնն երկնից առն՝ որ սերմանիցէ սերմն բարի յագարակի իւրում։ բկ. գկ.

Եւ ի քուն լինել մարդկան՝ եկն թշնամի նորա եւ ցանեաց ի վերայ որոմն ի մէջ ցորենոյն՝ եւ գնաց։

Եւ իբրեւ բուսաւ խոտն եւ արար պտուղ, ապա երեւեցաւ եւ որոմն։

Մատուցեալ ծառայք տանուտեառն ասեն ցնա. Տէր, ոչ սերմն բարի սերմանեցեր յագարակին քում, արդ՝ ուստի ունիցի զորոմն։

Եւ նա ասէ ցնոսա. այր թշնամի արար զայն. ասեն ցնա ծառայքն. կամիս զի երթիցուք քաղեսցուք զայն ի բաց։

Եւ նա ասէ ցնոսա. մի՛ գուցէ մինչ քաղիցէք զորոմնն, եւ զցորեանն ընդ նմին ի բաց խլիցէք։

Թո՛յլ տուք երկոցունց աճել ի միասին մինչեւ ի հունձս, եւ ի ժամանակի հնձոց ասացից ցհնձօղսն. քաղեցէք նախ զորոմն, եւ կապեցէք զայն խրձունս առ ի յայրել, եւ զցորեանն ժողովեցէք ի շտեմարանս իմ։

Այլ առակ արկ առ նոսա՝ եւ ասէ. Նման է արքայութիւն երկնից հատոյ մանանխոյ, զոր առեալ մարդոյ սերմանեաց յագարակի իւրում։

Որ փոքր է քան զամենայն սերմանիս. եւ յորժամ աճիցէ, մեծ է քան զամենայն բանջարս, եւ լինի ծառ՝ մինչեւ գալ թռչնոց երկնից, եւ հանգչել յոստս նորա։

Այլ առակ խօսեցաւ ընդ նոսա՝ եւ ասէ. Նման է արքայութիւն երկնից խմորոյ, զոր առեալ կնոջ թագոյց ի գրիւս երիս ալեր՝ մինչեւ ամենայն խմորեցաւ։

Զայս ամենայն խօսեցաւ Յիսուս առակօք ընդ ժողովուրդսն. եւ առանց առակի ոչինչ խօսէր ընդ նոսա։

Զի լցցի ասացեալն ի մարգարէէն. բացից առակօք զբերան իմ, բղխեցից զծածկեալսն ի սկզբանէ աշխարհի։

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

ՏէրՆ մեր Յիսուս Քրիստոս:

Յայնժամ թողեալ Յիսու- բկ.
սի զժողովուրդսն՝ եկն դկ.
ի տուն. մատեան առ նա աշակերտքն եւ ասեն. մեկնեա մեզ զառակ որոմացն ագարակին։

Նա պատասխանի ետ եւ ասէ ցնոսա. որ սերմանէ սերմն բարի՝ է որդի մարդոյ։

Եւ ագարակն աշխարհս է. սերմն բարի նոքա են, որ որդիքն արքայութեան են. իսկ որոմնն որդիք չարին են։

Եւ թշնամին որ վարեաց զայն՝ սատանայ է, եւ հունձքն կատարած աշխարհիս է, եւ հնձօղքն հրեշտակք են։

Որպէս ժողովի որոմնն եւ ի հուր այրի, այնպէս եղիցի ի կատարածի աշխարհիս։

Առաքեսցէ Որդի մարդոյ զհրեշտակս իւր, եւ ժողովեսցեն յարքայութենէ նորա զամենայն գայթակղութիւնս՝ եւ զայնոսիկ որք գործեն զանօրէնութիւն։

Եւ արկցեն զնոսա ի հնոց հրոյ. անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց։

Յայնժամ արդարքն ծագեսցին իբրեւ զարեգական յարքայութեան երկնից. որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մարկոսի։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

բմ. գմ. Եւ ասէր. այսպէս է արքայութիւն Աստուծոյ. որպէս թէ այր մի արկանիցէ սերմանիս յերկիր։

Եւ ննջիցէ եւ յառնիցէ զցայգ եւ զցերեկ. եւ սերմանիքն բուսանիցին եւ աճիցին, եւ նա ոչ գիտէ։

Թէ երկիրն ինքնին բերէ ըզպտուղ. նախ զխոտն, եւ ապա զհասկն, ապա ցորեանն առատ ի հասկին։

Եւ յորժամ տայցէ զպտուղն, վաղվաղակի առաքի մանգաղ, զի հասեալ են հունձք։

Եւ ասէր. ումե՞մ նմանեցուսցուք զարքայութիւնն Աստուծոյ. կամ որո՞վ առակաւ առակեսցուք զնա։

Որպէս հատն մանանխոյ՝ որ յորժամ սերմանիցի յերկրի, փոքրագոյն է քան զամենայն սերմանիս՝ որք են յերկրի։

Ճորժամ սերմանիցի, բուսանի եւ լինի մեծ քան զամենայն բանջար, եւ արձակէ ոստս մեծամեծս, մինչեւ բաւական լինիլ ընդ հովանեաւ նորա թռչնոց երկնից բնակիլ։

Եւ այնպիսի առակօք խօսէր ընդ նոսա զբանն, որպէս կարող լինէին լսել։

Եւ առանց առակի ոչինչ խօսէր ընդ նոսա. բայց առանձինն աշակերտացն իւրոց մեկնէր զամենայն։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ղուկասու։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

ակ. գկ. Մի երկնչիր հօտ փոքրիկ, զի հաճեցաւ հայրդ ձեր տալ ձեզ զարքայութիւն։

Վաճառեցէք զինչս ձեր եւ տուք զողորմութիւն. եւ արարէք ձեզ քսակս առանց հնանալոյ, գանձ անպակաս յերկինս. ուր ոչ գող մերձենայ, եւ ոչ ցեց ապականէ։

Զի ուր գանձն ձեր է, անդ եւ սիրտք ձեր եղիցին։

Եղիցին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջս, եւ ճրագունք լուցեալք։

Եւ դուք նմանողք մարդկան՝ որք ակն ունիցին Տեառն

իւրեանց՝ թէ երբ դառնայցէ ի հարսանեաց. զի յորժամ գայցէ եւ բաղխիցէ, վաղվաղակի բանայցեն նմա։

Ըրանի լոյծ ծառայիցն այնոցիկ՝ զոր եկեալ տէրն գտցէ արթունս, ամէն ասեմ ձեզ, զի գօտի ընդ մէջ ածցէ, եւ բազմեցուսցէ զնոսա, եւ անցեալ պաշտիցէ զնոսա։

Եւ եթէ յերկրորդ, կամ յերրորդ պահու եկեսցէ եւ գտցէ այնպէս, երանելիք են ծառայքն այնոքիկ։

Բայց զայն գիտացէք. եթէ գիտէր տանուտէրն՝ յորում ժամու գող գայ. հսկէր, եւ չտայր թոյլ ական հատանել ի տան իւրում՝։

Եւ դուք եղերուք պատրաստք, զի յորում ժամու ոչ կարծիցէք՝ գայ Որդի մարդոյ։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Պատասխանի եւ Յիսուս եւ ասէ ցնոսա. ամէն ամէն ասեմ ձեզ. ոչ կարէ որդի մարդոյ առնել յանձնէ եւ ոչինչ. եթէ ոչ տեսանիցէ զՀայրն զի առնէ. զի զոր նայն առնէ, զնոյն եւ Որդին նմին նման գործէ։

Զի Հայր սիրէ զՈրդի, եւ զամենայն ինչ յուսյանէ նմա՝ զոր ինքն առնէ. եւ մեծամեծս եւս քան զսոյնս յուսյանէ նմա զգործս, զի դուք զարմանայք։

Զի որպէս Հայր յարուցանէ զմեռեալս եւ կենդանի առնէ, նոյնպէս եւ Որդի զոր կամի կենդանի առնէ։

Եւ ոչ եթէ Հայր դատի զոք, այլ զամենայն դատաստան ետ Որդւոյ իւրոյ։

Զի ամենեքեան պատուեսցեն զՈրդի՝ որպէս պատուեն զՀայրն. որ ոչ պատուէ զորդին ոչ պատուէ զՀայր զառաքիչն նորա։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Ամէն ամէն ասեմ ձեզ. զի որ զբանն իմ լսէ, եւ հաւատայ այնմ՝ որ առաքեացն զիս, ընդունի զկեանն յաւիտենական. եւ ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ ի մահուանէ ի կեանս։

Ամէն ամէն ասեմ ձեզ. զի գայ ժամանակ՝ եւ արդէն իսկ

ա՛ձ.
գ՛ձ.

ա՛ձ.
գ՛ձ.

է, յորժամ մեռեալք լսիցեն ձայնի Որդւոյն Աստուծոյ. եւ որք լսիցեն կեցցեն։

Զի որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում, նոյնպէս եւ եւ Որդւոյ ունիլ կեանս յանձին իւրում։

Եւ իշխանութիւն եւ նմա դատաստան առնել, եւ զի Որդի մարդոյ է։

Ընդ այն զի զարմանայք. զի եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքին որք ի գերեզմանս կայցեն՝ լսիցեն ձայնի նորա, եւ եկեսցեն արտաքս։

Որոց զբարիս գործեալ իցէ՝ ի յարուցիւն կենաց. եւ որոց զչար արարեալ՝ ի յարուցիւն դատաստանաց։

Ոչ կարեմ ես յանձնէ առնել եւ ոչինչ. այլ որպէս լսեմ՝ դատիմ. եւ դատաստանն իմ արդար է. զի ոչ խնդրեմ զկամս իմ, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ հատանի ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա թէ մեռանիցի՝ բազում արդիւնս առնէ։ աձ.

Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա. եւ որատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ, ի կեանսն յաւիտենականս պահեսցէ զնա։

Եթէ ոք զիս պաշտիցէ, զկնի իմ եկեսցէ. եւ ուր եմն եմ, անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի. եթէ ոք զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ։ գձ.

ԱՒԵՏԱՐԱՆՔ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

բկ. դկ. Եւ մտեալ ի նաւ անց յայնկոյս, եւ եկն ի քաղաք իւր։

Եւ ահա մատուցին առ նա անդամալոյծ մի, որ դնէր ի մահիճս. եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա՝ ասէ ցանդամալոյծն. Թողեալ լիցին քեզ մեղք քո։

Եւ ահա ոմանք ի դպրացն ասեն ընդ միտս. Հայհոյէ դա։

Եւ ծանուցեալ Յիսուսի զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա. ընդէ՞ր խորհիք դուք չարիս ի սիրտս ձեր։

Զի՞նչ դիւրին է. ասել՝ Թողեալ լիցին քեզ մեղք քո. թէ ասել՝ արի՛ եւ շրջեաց։

Այլ զի գիտասջիք՝ եթէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս. յայնժամ ասէ ցանդամալոյծն. արի՛ առ զմահիճս քո՝ եւ երթ ի տուն քո։

Եւ յարուցեալ գնաց ի տուն իւր։

Իբրեւ տեսին ժողովուրդքն, զարմացան. եւ փառաւոր առնէին զԱստուած զտուիչըն այնպիսի իշխանութեան՝ մարդկան։

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի.

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ մինչդեռ անցանէր ընդ այն Յիսուս, զհետ եղեն նորա կոյրք երկու, աղաղակէին եւ ասէին. ողորմեա՛ց մեզ որդի Դաւթի։ բկ. դկ.

Եւ իբրեւ եկն ի տուն, մատեան առ նա կոյրքն. եւ ասէ ցնոսա Յիսուս. հաւատա՞յք եթէ կարող եմ առնել ձեզ զայդ. ասեն ցնա. այո՛, Տէր։

Յայնժամ մերձեցաւ յաչս նոցա եւ ասէ. ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ։

Եւ բացան աչք նոցա. եւ սաստեաց նոցա Յիսուս եւ ասէ. զգոյշ կացէք՝ մի՛ ոք գիտասցէ։

Եւ նոքա ելեալ համբաւեցին զնա ընդ ամենայն երկիրն ընդ այն։

Եւ յելանելն նոցա արտաքս. ահա մատուցին առ նա այր մի համր դիւահար։

Եւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն. և զարմացան ժողովուրդքն և ասեն. Թէ և ոչ երբեք երեւեցաւ այսպիսի ինչ յԻսրայէլի։

Իսկ փարիսեցիքն ասէին, Թէ իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մարկոսի։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ մտեալ դարձեալ ի Կափառնայում յետ աւուրց։

Լուր եղև եթէ ի տան է, և ժողովեցան բազումք՝ մինչև տեղի ևս ոչ լինել, և ոչ առ դրանն. և խօսէր նոցա զբանն։

Եւ գային առ նա՝ բերէին անդամալոյծ մի բարձեալ ի չորից։

Եւ իբրև ոչ կամէին մերձենալ առ նա յամբոխէ անտի, քակեցին զյարկն՝ ուր էր Յիսուս, և բացեալ զառաստաղն իջուցին զմահիճն՝ յորում կայր անդամալոյծն։

Եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա, ասէ ցանդամալոյծն. որդեակ, թողեալ լիցին քեզ մեղք քո։

Եւ էին ոմանք ի դպրաց անտի՝ որ անդ նստէին, և խորհէին ի սիրտս իւրեանց։

Զինչ է այս՝ որ խօսի սա զհայհոյութիւնս. ո՞վ կարէ թողուլ զմեղս, եթէ ոչ մի Աստուած։

Եւ գիտաց Յիսուս յոգի իւր՝ թէ այնպէս խորհէին ի սիրտս իւրեանց, և ասէ. զի՞ խորհիք զայդ ի սիրտս ձեր։

Զինչ դիւրին է, ասել ցանդամալոյծն՝ թողեաւ լիցին քեզ մեղք քո, եթէ ասել՝ արի՛, առ զմահիճս քո և երթ ի տուն քո։

Այլ զի գիտասջիք եթէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ ի վերայ երկրի թողուլ զմեղս, ասէ ցանդամալոյծն։

Քեզ ասեմ, արի՛ առ զմահիճս քո՝ և երթ ի տուն քո։

Եւ յարեաւ, վաղվաղակի առեալ զմահիճն՝ ել առաջի ամենեցուն. մինչև զարմանալ ամենեցուն և փառաւորել առնել զԱստուած և ասել, Թէ այսպիսի ինչ երբեք ոչ տեսաք։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մարկոսի։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

բձ. ղձ. Եւ եմուտ միւսանգամ ի ժողովուրդն. և էր անդ այր մի՝ որոյ ձեռն գօսացեալ էր։

Եւ սպասէին նմա՝ եթէ բժշկիցէ զնա ի շաբաթուն՝ զի չարաիօսեսցեն զնմանէ։

Եւ ասէ ցայրն՝ որոյ ձեռն գօսացեալ էր. արի անց ի մէջ։

Եւ ասէ ցնոսա. զինչ արժան է ի շաբաթու. բարի ինչ գործել՝ եթէ չար առնել. ոգի մի ապրեցուցանել՝ եթէ կորուսանել. և նոքա լռեցին։

Եւ հայեցեալ Յիսուսի զնոքօք լի ցասմամբ, տրտմեալ վասն կուրութեան սրտից նոցա, ասէ ցայրն. ձգեա զձեռն քո. և նա ձգեաց, և ողջացաւ ձեռն նորա։

Սրբոյ աւետարանիս Ցովսեփայ Քրիստոսի՝ որ ըստ Մարկոսի։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

բձ. ղձ. Զինչդեւ նա զայն խօսէր, գան ոմանք ի ժողովրդապետէն և ասեն. թէ դուստրն քո մեռաւ, զի ևս աշխատ առնես զվարդապետդ։

Իսկ Յիսուս իբրև լուաւ զբանն ասացեալ, ասէ ցժողովրդապետն. մի երկնչիր, բայց միայն հաւատա։

Եւ ոչ զոք եթող ընդ իւր երթալ, բայց միայն զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս զեղբայրն Յակովբայ։

Գայ ի տուն ժողովրդապետին, և տեսանէ ամբոխ յոյժ և լալականս, և աղաղակ յոյժ։

Եւ մտեալ ի ներքս՝ ասէ ցնոսա. զի խռովեալ էք և լայք. մանուկն ոչ է մեռեալ, այլ ննջէ։

Եւ ծաղր առնէին զնա. և նորա հանեալ արտաքս զամենեսեան, առնու ընդ իւր զհայրն մանկանն և զմայրն, և զնոսա՝ որ ընդ նմայն էին, և մտանէ՝ ուր դնեալ մանուկն։

Եւ կալեալ զձեռանէ մանկանն՝ ասէ ցնա. տալիթա կում. որ թարգմանի, աղջիկ դու՝ քեզ ասեմ՝ արի։

Եւ վաղվաղակի յարեաւ աղջիկն և գնայր, քանզի էր ամաց իբրև երկոտասանից. և զարմացան մեծաւ զարմանալեաւ։

Եւ պատուէր տայր նոցա յոյժ, զի մի ոք գիտասցէ զայն. և ասաց տալ նմա ուտել։

Սրբոյ աւետարանիս Ցիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մարկոսի։

Տէրն մեր Ցիսուս Քրիստոս։

քձ.
դձ.

Եւ անտի յարուցեալ՝ եկն ի սահմանս Տիւրոսի և Սիդովնի. և մտեալ ի տուն՝ ոչ ուրեք կամէր յայտնել, և ոչ կարաց ծածկել։

Լուաւ կին մի զնմանէ, որոյ դուստր իւր նեղեալ էր յայսոյ պղծոյ, եկն անկաւ առաջի նորա։

Եւ կինն էր հեթանոս՝ փիւնիկ Ասորի յազգէ. և աղաչէր զնա՝ զի զդեւն հանցէ ի դստերէ նորա։

Եւ Ցիսուս ասէ ցնա. Թոյլ տուր՝ զի նախ յագեսցին մանկունք. զի ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց՝ արկանել շանց։

Նա պատասխանի եառ և ասէ. Տէր, և շունք ի փշրանաց սեղանոյ մանկանցն կեբակրին։

Եւ ասէ ցնա. վասն այդր բանի՝ երթ, ել դեւն ի դստերէ քումմէ։

Գնաց ի տուն իւր, և եգիտ ելեալ զդեւն, և դուստրն. զի անկեալ դնիւր ի մահիճս։

Եւ ելեալ միւսանգամ ի սահմանացն Տիւրոսի և Սիդովնի, և եկն ի ծովեզրն Գալիլեացւոց ի մէջ սահմանացն ի Դեկապօլիս։

Եւ բերին առաջի նորա խուլ մի և համր, և աղաչէին, զի ձեռն դիցէ ի վերայ նորա։

Եւ առեալ զնա ի մէկուսի յամբոխէ անտի, արկ զմատունս իւր ընդ ականջս նորա՝ և եթուք անդր. կալաւ զլեզուէ նորա։

Հայեցաւ յերկինս՝ յոգւոց եհան և ասէ. Եփփաթա, որ է բացիր։

Եւ նոյն ժամայն բացան լսելիք նորա, և լուծան կապանք լեզուի նորա, և խօսէր ուղիղ։

Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի ումեք ասիցեն, և որչափ նա պատուիրէր նոցա, նոքա և առաւել քարոզէին։

Եւ և զամենայն զարմանային և ասէին. զամենայն ինչ բարւոք գործեաց սա, զի խլից լսել տայ, և համրոց խօսիլ։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ղուկասու։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

ակ. գկ.

Եւ եղեւ ի հասանելն նորա ի մի ի քաղաքացն, ահա այր մի լի բորոտութեամբ, իբրեւ ետես զՅիսուս՝ անկեալ ի վերայ երեսաց՝ աղաչեաց զնա, և ասէ. Տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել։

Զգեաց զձեռն իւր՝ հասոյց ի նա և ասէ. կամիմ, սրբեաց. և վաղվաղակի գնաց ի նմանէ բորոտութիւն։

Եւ նա պատուիրեաց նմա՝ մի ումեք ասել. այլ թէ երթ ցոյց զանձն քո քահանային, և մատո զպատարագ վասն սրբութեան քո, որպէս և հրամայեաց Մովսէս՝ ի վկայութիւն նոցա։

Եւ յորդեր առաւել բանն գնմանէ. և ժողովէին ժողովուրդք բազումք լսել՝ և բժշկիլ ի հիւանդութենէ իւրեանց։

Եւ նա խոյս տայր յանապատ տեղիս. և կայր յաղօթս։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ղուկասու։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

ակ. գկ.

Եւ հանէր դա մի համր. և եղեւ յելանել դիւին խօսեցաւ համրն, և զարմացան ամենայն ժողովուրդքն։

Եւ ոմանք ի նոցանէ ասեն, բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդևս։

Եւ այլք փորձէին, և նշան յերկնից խնդրէին ի նմանէ։

Իսկ նորա գիտացեալ զխորհուրդս նոցա, ասէ ցնոսա. ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ աւերի և տուն բաժանեալ յանձն՝ կործանի։

Ապա եթէ և սատանայ բաժանեցաւ յանձնէ, զիա՞րդ կայցէ թագաւորութիւն նորա. զի ասէք զինէն թէ բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդևս։

Եթէ ես բէեղզեբուղաւ հանեմ զդևս, որդիքն ձեր ի՞ւ հանիցեն, վասն այդորիկ նոքին եղիցին ձեր դատաւորք։

Իսկ եթէ մատամբ Աստուծոյ հանեմ զդևս, ապա հասեալ է ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

ա՛ձ. գ՛ձ.

Եւ յետ երկուց աւուրց եկն անտի և գնաց ի Գալիլեա։

Զի ինքն իսկ Յիսուս վկայեաց եթէ մարգարէ յիւրում գաւառի պատիւ ոչ ունի։

Այլ յորժամ եկն նա ի Գալիլեա, ընկալան զնա Գալիլեացիքն. զի տեսեալ ևս էր զամենայն նշանսն, զոր արար Երուսաղէմ ի տօնին. քանզի և նոքա եկեալ էին ի տօնն։

Եկն դարձեալ ի Կանայ Գալիլեացւոց, ուր արար զջուրն գինի. և անդ էր թագաւորազն մի, որոյ որդի նորա հիւանդ կայր ի Կափառնայում։

Նա իբրև լուաւ եթէ Յիսուս եկեալ է ի Հրէաստանէ ի Գալիլեա, եկն առ նա, և աղաչէր՝ զի իջցէ և բժշկեսցէ զորդի նորա. քանզի մերձ էր ի մեռանիլ։

Ասէ ցնա Յիսուս. եթէ ոչ նշանս և արուեստս տեսանէք՝ ոչ հաւատայք։

Ասէ ցնա թագաւորազն. Տէր. էջ մինչչև մեռեալ իցէ մանուկն իմ։

Ասէ ցնա Յիսուս. երթ, որդին քո կենդանի է. և հաւատաց այրն բանին՝ զոր ասաց նմա Յիսուս, և գնաց։

Եւ մինչդեռ իջանէր, ընդառաջ եղեն նմա ծառայքն նորա. աւետիս ետուն և ասեն, թէ մանուկն նորա կենդանի է։

Հարցանէր ցնոսա վասն ժամուն՝ յորում ապաքինեաց. և ասեն ցնա. երէկ յեօթնեորորդում ժամու եթող զնա ջերմն։

Գիտաց հայրն նորա՝ եթէ յայնմ ժամու՝ յորում ասաց ցնա Յիսուս՝ թէ որդին քո կենդանի է. և հաւատաց ինքն և ամենայն տունն իւր։

Զայս դարձեալ երկրորդ նշան արար Յիսուս եկեալ ի Հրէաստանէ ի Գալիլեա։

ԱՒԵՏԱՐԱՆՔ ՏԱՃԱՐԻ

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս:

բկ. Եւ ելեալ արտաքս Յիսուս
գկ. ի տաճարէն գնայր. և
մատեան աշակերտքն ցուցանել զշինուածս տաճարին։

Եւ նա պատասխանի ետ և ասէ ցնոսա. տեսանէք զայդ ամենայն. ամէն ամէն ասեմ ձեզ, ոչ մնասցէ այդր քար ի քարի վերայ որ ոչ քակտեսցի։

Եւ մինչդեռ նստէր ի լերինն Ձիթենեաց, մատեան առ նա աշակերտքն առանձինն և ասեն. ասա մեզ՝ երբ լինիցի այդ, և կամ զինչ նշան իցէ քոյոյ գալստեանն և վախճանի աշխարհիս։

Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա, զգոյշ լերուք՝ գուցէ ոք զձեզ խաբիցէ։

Զի բազումք գայցեն յանուն իմ, և ասիցեն՝ թէ ես եմ Քրիստոսն, և զբազումս մոլորեցուցանիցեն։

Լսելոց էք պատերազմունս և համբաւս պատերազմաց. զգոյշ լերուք՝ մի խռովեսջիք, զի պարտ է լինել այնմ ամենայնի, այլ չև է կատարած։

Յարիցէ ազգ յազգի վերայ, և թագաւորութիւն ի թագաւորութեան վերայ. և եղիցին սովք և սրածութիւնք ի տեղիս տեղիս։

Սակայն և այն ամենայն սկիզբն է երկանց։

Յայնժամ մատնեսցեն զձեզ ի նեղութիւն, և սպանանիցեն զձեզ. և եղիջիք ատեցեալք յամենայն ազգաց վասն անուան իմոյ։

Եւ յայնժամ գայթակղեսցին բազումք, և զմիմեանս մատնեսցեն, և ատեսցեն զմիմեանս։

Եւ բազում սուտ մարգարէք յարիցեն, և զբազումս մոլորեցուսցեն։

Եւ վասն բազմանալոյ անօրէնութեանն՝ ցամաքեսցի սէր բազմաց։

Բայց որ համբերեսցէ իսպառ՝ նա կեցցէ։

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մարկոսի։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

ԵՒ յելանելն նորա ի տաճարէ անտի, ասէ ցնա մի յաշակերտացն նորա, վարդապետ, տես որպիսի են քարինք, և որպիսի շինուածք։

Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ. տեսանես զայդ ամենայն շինուածս. ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ թողցի քար ի քարի վերայ՝ որ ոչ քակտեսցի։

ԵՒ մինչ նստէր նա ի լերինն Ձիթենեաց յանդիման տաճարին, հարցանէին ցնա առանձինն՝ Պետրոս՝ և Յակովբոս՝ և Յովհաննէս՝ և Անդրէաս։

Ասա մեզ՝ ե՞րբ լինիցի այդ, և զինչ նշան է՝ յորժամ կատարելոց լիցի այդ ամենայն։

Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. զգոյշ կացէք, մի ոք զձեզ խաբեսցէ։

Զի բազումք եկեսցեն յանուն իմ և ասիցեն՝ թէ ես եմ Քրիստոս, և զբազումս մոլորեցուսցեն։

Այլ յորժամ լսիցէք պատերազմունս և համբաւս պատերազմաց՝ մի խռովիցիք, զի պարտ է լինել. բայց չև է կատարած։

Զի յարիցէ ազգ յազգի վերայ, և թագաւորութիւն ի թագաւորութեան վերայ. և եղիցին շարժմունք ի տեղիս տեղիս, սովք և սրածութիւնք, և խռովութիւնք։ այլ այն ամենայն սկիզբն է երկանց։

ԵՒ զձեզ իսկ մատնեսցեն յատեանս. և ի ժողովուրդս տանջիցիք, և առաջի դատաւորաց և թագաւորաց կայցէք վասն իմ ի վկայութիւն նոցա։

ԵՒ ամենայն հեթանոսաց. բայց նախ պարտ է աւետարանիս քարոզել։

Այլ յորժամ տանիցին զձեզ մատնել, մի յառաջագոյն հոգայցէք, և մի զմտաւ ածիցէք, թէ զինչ խօսիցէք. այլ որ ինչ տացի ձեզ ի ժամուն յայնմիկ՝ զայն խօսիցիք. զի ոչ դուք էք որ խօսիցիքն՝ այլ Հոգին սուրբ։

Մատնեսցէ եղբայր զեղբայր ի մահ, և հայր՝ զորդի. և յարիցեն որդիք ի վերայ հարց՝ և սպանանիցեն զնոսա։

ԵՒ եղիջիք ատելեաք յամենեցունց վասն անուան իմոյ. այլ որ համբերեսցէն իսպառ՝ նա կեցցէ։

Որբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի՝
որ ըստ Ղուկասու.

Տէրն մեր Յիսուս Քրիստոս:

ակ.
գկ. Եւ յասել ոմանց զտա-ճարէն. թէ գեղեցիկ վիմօք և աշտարակօք զար-դարեալ է՝ ասէ:

Զայդ ամենայն զոր տեսա-նէք, եկեսցեն աւուրք՝ յորս ոչ թողցի այդր քար ի քարի վերայ, որ ոչ քակտեսցի:

Հարցին ցնա և ասեն. վար-դապետ, երբ լինիցի այդ, և զինչ նշան իցէ՝ յորժամ այդ լինելոց իցէ:

Եւ նա ասէ. զգոյշ կացէք. մի խաբիցիք. զի բազումք գա-ցեն յանուն իմ, և ասիցեն թէ ես եմ. և մերձեցաւ ժա-մանակ. մի երթայցէք զկնի նոցա:

Եւ յորժամ լսիցէք պատե-րազմունս և խռովութիւնս՝ մի զարհուրիցիք, զի պարտ է նախ՝ այնմ լինել, այլ ոչ առ-ժամայնն կատարած:

Յայնժամ ասէ ցնոսա. յա-րիցէ ազգ յազգի վերայ, և թագաւորութիւն ի թագաւո-րութեան վերայ:

Եւ շարժմունք մեծամեծք, և ի տեղիս տեղիս սովք և սրածութիւնք. եղիցին արհա-ւիրք և նշանք մեծամեծք յերկնից:

Բայց յառաջ քան զայս ա-մենայն, մխեսցեն զձեռս իւր-եանց ի ձեզ՝ և հալածեսցեն. մատնեսցեն ի ժողովուրդս և ի բանտս, և տանիցին առա-ջի դատաւորաց և թագաւո-րաց վասն անուան իմոյ:

Եւ լինիցի ձեզ այն ի վկա-յութիւն:

Արդ՝ դիք ի սիրտս ձեր, մի յառաջագոյն կրթել տալոյ պատասխանի:

Զի ես տաց ձեզ բերան և իմաստութիւն, որում ոչ կա-րիցեն կալ հակառակ՝ կամ տալ պատասխանի ամենայն հակառակորդքն ձեր:

Մատնեսջիք և ի ծնողաց, և յեղբարց. և յազգատոհ-մաց և ի բարեկամաց, և սպա-նանիցեն ի ձէնջ:

Եւ եղիջիք ատեցեալք յա-մենեցունց վասն անուան իմոյ:

Եւ մազ մի ի գլխոյ ձերմէ ոչ կորիցէ:

Եւ համբերութեամբ՝ ձերով ստասջիք զոգիս ձեր:

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Ի ժամանակի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

աձ. Եղեն յայնժամ նաւակատիքն յԵրուսաղէմ, և
գձ. ձմեռն էր։

Եւ շրջէր Յիսուս ի տաճարին ի սրահին Սողոմովնի։

Շուրջ եղեն զնովաւ Հրեայքն և ասեն. մինչև յերբ թափես զոգիս մեր. եթէ դու ես Քրիստոսն՝ ասա մեզ համարձակ։

Պատասխանի ետ նոցա Յիսուս և ասէ. ասացի ձեզ և ոչ հաւատայք ինձ. զգործսն՝ զոր ես գործեմ յանուն Հօր իմոյ՝ նոքին իսկ վկայեն վասն իմ։

Այլ դուք ոչ հաւատայք. զի չէք յոչխարաց անտի իմոց։

Ոչխարք իմ ձայնի իմում լսեն, և ես ճանաչեմ զնոսա. և զկնի իմ գան։

Եւ ես տամ նոցա զկեանսն յաւիտենականս. և մի՛ կորիցեն ի յաւիտեան, և մի՛ ոք յափշտակեսցէ զնոսա ի ձեռաց իմոց։

Հայրն իմ, որ ետ ինձ զնոսա, մեծ է քան զամենայն, և ոչ ոք կարէ յափշտակել ի ձեռաց Հօր իմոյ։

Ես և Հայր իմ մի եմք։

Վէմս առին Հրեայքն՝ զի քարկոծ արասցեն զնա։

Պատասխանի ետ նոցա Յիսուս. բազում գործս բարիս ցուցի ձեզ ի Հօրէ իմմէ, վասն որո՞յ գործոյ ի նոցանէ քարկոծ առնէք զիս։

Պատասխանի ետուն նմա Հրեայքն. վասն բարւոյ գործոյ ոչ առնեմք զքեզ քարկոծ, այլ վասն հայհոյութեան. և զի դու մարդ ես. և զանձն քո Աստուած առնես։

Պատասխանի ետ նոցա Յիսուս. ո՞չ յօրէնսն ձեր գրեալ է. ես ասացի թէ աստուածք իցէք։

Իսկ եթէ զնոսա աստուածս ասէ՝ առ որս բանն Աստուծոյ եղև, և չէ մարթ եղծանել գրոյն։

Իսկ զոր Հայր սրբեաց՝ և առաքեաց յաշխարհ, դուք ասէք՝ թէ հայհոյես, զի՛ ասացի՝ թէ Որդի Աստուծոյ եմ։

Եթէ ոչ գործեմ զգործս Հօր իմոյ, մի՛ հաւատայք ինձ։

Ապա թէ գործեմ, թէև ինձ ոչ հաւատայք, սակայն գործոցն հաւատացէք, զի գիտասջիք, և ծանիջիք՝ եթէ Հայր յիս, և ես ի Հայր։

Դարձեալ խնդրէին զնա

ունել, և ել ի ձեռաց նոցա։

Եւ գնաց միւսանգամ յայնկոյս Յորդանանու՝ ի տեղին, ուր էր Յովհաննէս զառաջինն և մկրտէր, և անդ լինէր։

Եկին բազումք առ նա՝ և ասեն. զի Յովհաննէս նշան ինչ ոչ արար։

Բայց զամենայն՝ զոր ասաց Յովհաննէս վասն նորա՝ ճըշմարիտ էր. և բազումք հաւատացին ի նա անդ։

ԱՒԵՏԱՐԱՆՔ ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Վասն խաչելութեան Տեառն՝ մերոյ Յիսուսի Քրիստոսի։

ԲԿ ՊԿ·

Եւ հանեալ զնա ի խաչ, բաժանեցին զհանդերձս նորա վիճակաւ· զի լցի բանն որ ասացաւ ի մարգարէէն· բաժանեցին զհանդերձս իմ յիւրեանս, և ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին։

Եւ նստեալ պահէին զնա։

Եւ եդին ի վերայ գլխոյ նորա՝ գրեալ զվնաս նորա· թէ այս է Յիսուս Թագաւորն Հրէից։

Յայնժամ հանին ընդ նմա ի խաչ երկուս աւազակս, մի յաջմէ նորա՝ և մի յահեկէ։

Եւ որք անցանէինն՝ հայհոյէին զնա· շարժէին զգլուխս իւրեանց։

Եւ ասէին վայ, որ քակէիր զտաճարն, և զերիս աւուրս շինէիր զնա· ապրեցո զքեզ· թէ որդի ես Աստուծոյ՝ էջ ի խաչէդ։

Նոյնպէս և քահանայապետքն ձաղէին հանդերձ դպրօքն և ծերովք և ասէին·

Զայլս ապրեցոյց, զինքն ոչ կարէ ապրեցուցանել· եթէ թագաւոր է Իսրայէլի՝ իջցէ այժմ ի խաչէդ՝ և հաւատասցուք դմա։

Եթէ յուսացաւ յԱստուած, փրկեսցէ այժմ զդա եթէ կամի զդա· քանզի ասաց՝ եթէ Աստուծոյ որդի եմ։

Զնոյն և աւազակքն՝ որ խաչեալ էին ընդ նմա, նախատէին զնա։

Եւ ի վեց ժամէ աւուրն խաւար եղև ի վերայ ամենայն երկրի մինչև ցինն ժամ։

Եւ զինն ժամուն գոչեաց Յիսուս ի ձայն մեծ՝ և ասէ· Էլի Էլի, լամա սաբաքթանի· այսինքն է, Աստուած իմ, Աստուած իմ, ընդէր թողեր զիս։

Ոմանք յայնցանէ՝ որ անդն կային, իբրև լուան՝ ասէին· զԵղիա կարդայ։

Եւ վաղվաղակի ընթացաւ մի ոմն ի նոցանէ, առ սպունգ լի քացախով, և հարեալ յեղեգան՝ ետ ըմպել նմա։

Եւ կէսքն ասէին. Թող տեսցուք եթէ գայ Եղիա վրկել զդա։

Եւ Յիսուս դարձեալ աղաղակեաց ի ձայն մեծ՝ և արձակեաց զոգին։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մարկոսի։

Վասն խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ աճեն զնա ի Գողգոթայ՝ տեղի մի՝ որ Թարգմանի տեղի կառափելոյ։

Եւ տային նմա գինի զմրուսեալ, և նա ոչ առ և հանին զնա ի խաչ։

Եւ իբրև խաչեցին զնա, բաժանեցին զհանդերձս նորա, արկեալ վիճակս ի վերայ՝ թէ թէ ո զինչ առնուցու։

Էր ժամ երրորդ և հանին զնա ի խաչ։

Եւ էր գիր վնասու նորա գրեալ, թէ Թագաւոր է Հրէից։

Եւ ընդ նմա հանին ի խաչ երկուս աւազակս, մի ընդ աջմէ և մի ընդ ահեկէ նորա։

Եւ լցաւ գիրն որ ասէ, թէ ընդ անօրէնս համարեցաւ։

Եւ որք անցանէին՝ հայհոյէին զնա, շարժեալ զգլուխս իւրեանց, և ասէին. վահ, որ քակէիր զտաճարն՝ և զերիս աւուրս շինէիր։

Ապրեցո զանձն քո և էջ ի խաչէդ։

Նոյնպէս և քահանայապետքն այպն արարեալ՝ ընդ միմեանս հանդերձ դպրօքն ասէին. զայլս ապրեցոյց՝ զանձն ոչ կարէ ապրեցուցանել։

Քրիստոսդ արքայդ Իսրայէլի, իջցէ այժմ ի խաչէ այսր, զի տեսցուք և հաւատասցուք դմա. և որք ընդ նմա ի խաչն ելեալ էին՝ նախատէին զնա։

Եւ իբրև վեց ժամ եղև՝ խաւար կալաւ զամենայն երկիր մինչև ցինն ժամ։

Եւ յիններորդ ժամուն աղաղակեաց Յիսուս ի ձայն մեծ, և ասէ. Էլի, Էլի, լամա սաբաքթանի. որ Թարգմանի, Աստուած իմ, Աստուած իմ, ընդէր Թողեր զիս։

Եւ ոմանք ի նոցանէ՝ որ շուրջն կային զնովաւ՝ իբրև լուան, ասէին՝ եթէ զեղիա կարդայ։

Եւ ընթացեալ մի ոմն՝ եւ լից սպունգ լի քացախով, և հարեալ յեղեգան՝ տայր ըմպել նմա, և ասէ. Թոյլ տուք, տեսցուք՝ գայ եղիա իջուցանել զդա։

Եւ Յիսուս արձակեաց ի ձայն մեծ՝ և եհան զոգի։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ղուկասու։

Վասն խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

ակ. գկ. Իբրև չոգան ի տեղին՝ կոչեցեալ գագաթն, անդ հանին զնա ի խաչ. և զչարագործսն՝ զոմն ընդ աջմէ՝ և զոմն ընդ ձախմէ խաչեցին։

Եւ Յիսուս ասէ. Հայր՝ թող դոցա՝ զի ոչ գիտեն, զինչ գործեն. և ի բաժանել զհանդերձս նորա, արկին վիճակս։

Եւ կայր ժողովուրդն հայեցեալ. անգոնեցին զնա իշխանքն հանդերձ նոքօք՝ և ասէին, զայլս ապրեցոյց, ապրեցուսցէ և զանձն՝ եթէ դա է Քրիստոս որդի Աստուծոյ ընտրեալն։

Այպն առնէին զնա և զինուորքն, եկեալ առաջի՝ մատուցանէին նմա քացախ։

Եւ ասէին. եթէ դու ես թագաւորն հրէից՝ փրկեա զանձն քո։

Եւ էր գիր գրեալ ի վերայ նորա, Յունարէն՝ և Դաղմատերէն՝ և Եբրայեցերէն գրով, թէ՝ սա է արքայն հրէից։

Իսկ ի մի ոմն ի կախելոց չարագործացն հայհոյէր զնա՝ և ասէր. ոչ դու ես Քրիստոսն, փրկեա զանձն քո և զմեզ։

Պատասխանի եւս ընկերն սաստելով նմա՝ և ասէ. չերկնչիս դու յԱստուծոյ՝ զի ի նմին պատժի կաս։

Եւ մեք՝ յիրաւի, զի արժանի որոց գործեցաքն՝ առնումք զհատուցումն. և սա՝ ապիրատ ինչ ոչ գործեաց։

Եւ ասէ ցՅիսուս. յիշեա զիս Տէր՝ յորժամ՝ գայցես արքայութեամբ քով։

Եւ ասէ ցնա Յիսուս. ամէն ասեմ քեզ. այսօր ընդ իս իցես ի դրախտին։

Եւ էր իբրև վեցերորդ ժամ, և խաւար եղև ի վերայ ամենայն երկրի մինչև ցիններորդ ժամն. խաւարեցաւ արեգակն։

Եւ հերձաւ վարագոյր տաճարին ընդ մէջ։

Եւ կարդաց Յիսուս ի ձայն մեծ՝ և ասէ, Հայր՝ ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ, զայս իբրև ասաց, եհան զոգի։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Վասն խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

աձ. զձ. Եւ նոքա առեալ տանէին զնա. և բարձեալ էր ինքնին զխաչափայտն, և ելա-

նէր ի տեղին որ անուանէր գագաթան, և կոչէր Եբրայեցերէն Գողգոթա։

Ուր և ի խաչն իսկ հանին զնա. և ընդ նմա երկուս ևս այլս աստի և անտի, և ի միջի զՅիսուս։

Գրեաց և տախտակ մի Պիղատոս, և եդ ի վերայ խաչին. և էր գրեալ. Յիսուս Նազովրեցի թագաւոր Հրէից։

Զայն տախտակ ընթերցան բազումք ի Հրէից. զի մօտ էր ի քաղաք անդր տեղին՝ ուր խաչեցաւն Յիսուս. և էր գրեալ Եբրայեցերէն՝ Դաղմատերէն և Յունարէն։

Ասեն ցՊիղատոս քահանայապետքն Հրէից. մի գրեր թագաւոր Հրէից, այլ թէ նա ասաց՝ թագաւոր եմ Հրէից։

Պատասխանի ետ Պիղատոս. զոր ինչ գրեցի՝ գրեցի։

Իսկ զինուորքն իբրև հանին ի խաչ զՅիսուս, առին զհանդերձս նորա՝ և արարին չորս մասունս, իւրաքանչիւր զինուորի մասն. իսկ զպատմուճանն՝ քանզի էր առանց կարանի ի վերուստ փորանկեալ ամենևին։

Ասեն ցմիմեանս. մի պատառեսցուք զայդ, այլ արկցուք վիճակս ի վերայ դորա, ումն և ելցէ, զի լցցի գիրն որ. ասէ բաժանեցին զհանդերձս իմ յիւրեանս. և ի վերայ պատմուճանի իմոյ վիճակ արկին. զինուորքն զայս ինչ գործեցին։

Եւ կային առ խաչին Յիսուսի մայրն նորա, և քոյր մօր նորա Մարիամ Կղէովպա, և Մարիամ Մագդաղենացի։

Յիսուս իբրև ետես զմայրն և զաշակերտն զոր սիրէր՝ զի կայր մօտ, ասէ ցմայրն, կին դու՝ ահա որդի քո։

Ապա ասէ ցաշակերտն. ահա մայր քո. և յայնմ ժամանակէ առ աշակերտն՝ զնա առ իւր։

Յետ այսորիկ իբրև գիտաց Յիսուս՝ եթէ ահա ամենայն ինչ կատարեալ է, զի կատարեսցի գիրն, ասէ. ծարաւի եմ։

Եւ անդ կայր աման ինչ՝ լի քացախով. և նոցա սպունգ լցեալ քացախով ընդ լեզուի՝ շուրջ եդեալ զմշտակաւ զոպային՝ մատուցին ի բերան նորա։

Իբրև առ Յիսուս զքացախն հանդերձ լեզուովն՝ ասէ. ամենայն ինչ կատարեալ է. և խոնարհեցուցեալ զգլուխն աւանդեաց զոգին։

ԱՒԵՏԱՐԱՆՔ ԻՒՂԱԲԵՐԻՑ

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Վասն թաղման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

իէ. Եւ իբրեւ երեկոյ եղեւ,
իը. եկն այր մի մեծատուն
Յարիմաթեայ, որում անուն էր Յովսէփ, որ և աշակերտեցաւ իսկ Յիսուսի։

Սա մատուցեալ առ Պիղատոս, խնդրեաց զմարմինն Յիսուսի. յայնժամ Պիղատոս հրամայեաց տալ զմարմինն։

Եւ առեալ զմարմինն Յովսէփ՝ պատեաց սուրբ կտաւովք։

Եւ եդ ի նոր գերեզմանի՝ զոր փորեաց ի վիմի. և թաւալեցուցեալ կափարիչ դրան գերեզմանին վէմ մի մեծ և գնաց։

Անդ էր Մարիամ Մագդաղենացի, և միւս Մարիամն, նստէին հանդէպ գերեզմանին։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մարկոսի։

Վասն թաղման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Եւ իբրեւ երեկոյ եղեւ, ժե.
քանզի ուրբաթ էր՝ որ ժզ.
ի շաբաթն մտանէր։

Եկեալ Յովսէփ՝ որ Յարեմաթեայն էր, այր պարկեշտ, նախարար, որ և ինքն իսկ ակն ունէր արքայութեան Աստուծոյ, համարձակեցաւ, եմուտ առ Պիղատոս, և խնդրեաց զմարմինն Յիսուսի։

Եւ Պիղատոս զարմացաւ թէ այնչափ վաղ մեռաւ. և կոչեցեալ առ ինքն զհարիւրապետն, եհարց զնա և ասէ, թէ արդարև այնչափ վաղ մեռաւ։

Եւ իբրեւ ստուգեաց ի հարիւրապետէ անտի, շնորհեաց զմարմինն Յովսէփայ։

Եւ Յովսէփ գնեաց կտաւ, և իջուցեալ զնա՝ պատեաց կտաւովն, և եդ ի գերեզմանի՝ զոր էր փորեալ ի վիմէ, և թաւալեցոյց զվէմ մի ի դուռն գերեզմանին։

Իսկ Մարիամ Մագդաղե-

Նացի և Մարիամ Յակովբայ և Յովսեայ տեսին զտեղին ուր եդաւ։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ղուկասու.

Վասն թաղման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

ակ. Եւ ահա այր մի, անուն
պկ. Յովսէփ, որ էր նախարար՝ այր բարեգործ և արդար։

Սա՝ չէր միաբանեալ ընդ խորհուրդս և ընդ գործս նոցա. Յարիմաթեայ քաղաքէ հրէից, որ և ինքն իսկ՝ ակն ունէր արքայութեան Աստուծոյ։

Սա՝ մատուցեալ առ Պիղատոս՝ խնդրեաց զմարմինն Յիսուսի։

Եւ իջուցեալ զնա՝ պատեաց պատանաւ, և եդ ի կռածոյ գերեզմանին. ուր չէր զոք բնաւ եդեալ։

Եւ օրն էր ուրբաթ, և շաբաթ լուսանայր։

Եւ երթային զհետ նորա կանայք՝ որ եկեալ էին ընդ նմա ի Գալիլեէ. տեսին զգերեզմանն, և որպէս եդաւ մարմինն նորա։

Դարձան, և պատրաստեցին խունկս և իւղս. և ի շաբաթուն հանդարտեցին վասն պատուիրանին։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու.

Վասն թաղման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Յետ այսորիկ աղաչեաց աճ.
զՊիղատոս Յովսէփ, որ գճ.
Յարեմաթեայ էր աշակերտ Յիսուսի ի ծածուկ՝ վասն ահին հրէից, զի բարձցէ զմարմինն Յիսուսի. և հրամայեաց Պիղատոս. եկին և բարձին զնա։

Եկն Նիկոդիմոս՝ որ եկեալ էր առ Յիսուս ի գիշերի զառաջինն, և եբեր զմուռս խառն ընդ հալուէս իբրև լտերս հարիւր։

Առին զմարմինն Յիսուսի, և պատեցին կտաւովքն հանդերձ, որպէս օրէն էր հրէից պատել։

Եւ էր ի տեղւոջն յորում խաչեցաւ՝ պարտէզ. և ի պարտիզի անդ գերեզման նոր, յորում ոչ ոք երբէք՝ էր եդեալ։

Անդ վասն ուրբաթուն հրէից՝ զի մօտ էր գերեզմանն՝ եդին զՅիսուս։

ԱՒԵՏԱՐԱՆՔ ԻՒՂԱԲԵՐԻՑ

ՑԻՆԱՆՑ ԿԻՒՐԱԿԷԻՑ

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Վասն յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

բկ. գկ. Եւ յերեկոյի շաբաթուն յորում լուսանայր միաշաբաթին, եկն Մարիամ Մագդաղենացի, և միւս Մարիամն տեսանել զգերեզմանն։

Եւ ահա շարժումն մեծ եղև. զի հրեշտակ Տեառն իջեալ յերկնից՝ մատուցեալ ի բաց թաւալեցոյց զվէմն ի դրանց անտի. և նստէր ի վերայ նորա։

Եւ էր տեսիլ նորա իբրև զփայլակն, և հանդերձ նորա սպիտակ իբրև զձիւն։

Եւ յահէ անտի նորա խռովեցան պահապանքն, և եղեն իբրև զմեռեալս։

Պատասխանի ետ հրեշտակն և ասէ ցկանայսն. մի՛ երկնչիք դուք. գիտեմ զի զՅիսուս զխաչելեալն խնդրէք։

Չէ՛ աստ, քանզի յարեաւ, որպէս ասացն. եկայք և տեսէք զտեղին՝ ուր կայր։

Եւ վաղվաղակի երթայք ասացէք աշակերտացն նորա՝ թէ յարեաւ. և ահա յառաջանայ քան զձեզ ի Գալիլեա, անդ տեսանիցէք զնա. ահա ասացի ձեզ։

Եւ ելեալ վաղվաղակի ի գերեզմանէ անտի ահիւ և խնդութեամբ բազմաւ՝ ընթանային պատմել աշակերտացն։

Եւ ահա պատահեցաւ նոցա Յիսուս և ասէ, ո՛ղջ էք. և նոքա մատուցեալ կալան զոտս նորա, և երկիրպագին նմա։

Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս. մի՛ երկնչիք, երթա՛յք ասացէ՛ք եղբարցն իմոց՝ զի երթիցեն ի Գալիլեա, և անդ տեսցեն զիս։

Իբրև նոքա գնացին, ահա ոմանք ի զօրականացն եկին ի քաղաքն, և պատմեցին քահանայապետիցն զամենայն որ ինչ եղեւն։

Եւ նոքա ժողովեալ հանդերձ ծերովքն, խորհուրդ

արարեալ՝ արծաթ յոյժ ետուն զօրականացն։

Եւ ասեն. ասասջիք՝ եթէ աշակերտքն նորա եկեալ գիշերի, գողացան զնա՝ մինչ մեք ի քուն էաք։

Եւ եթէ լուր լիցի այդ առ դատաւորն, մեք հաճեսցուք զնա, և զձեզ անհոգս արասցուք։

Եւ նոցա առեալ զարծաթն, արարին որպէս ուսանն. ևել համբաւս այս ի Հրէից մինչև ցայսօր։

Իսկ մետասան աշակերտքն գնացին ի Գալիլեա՝ ի լեառնն՝ ուր ժամադիր եղև նոցա Յիսուս։

Իբրև տեսին զնա, երկիրպագին նմա, և ոմանք երկուացան։

Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա և ասէ. տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի. որպէս առաքեաց զիս Հայր, և ես առաքեմ զձեզ։

Գնացէք այսուհետև աշակերտեցէք զամենայն հեթանոսս. մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Ուսուցէք նոցա պահել զամենայն՝ որ ինչ պատուիրեցի ձեզ. և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս՝ մինչև ի կատարած աշխարհի։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մարկոսի։

Վասն յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Եւ իբրև անց շաբաթն, բծ.
Մարիամ Մագդաղենա- դծ.
և Մարիամ Յակոբայ և Սողոմէ չոգան պատրաստեցին խունկս, զի եկեսցեն, օծցեն զնա։

Եւ ընդ առաւօտս միաշաբաթուն գան ի գերեզմանն ընդ արևագալն։

Եւ ասէին ցմիմեանս. ո՞վ թաւալեցուսցէ մեզ զվէմն ի դրանց գերեզմանին։

Եւ հայեցեալ տեսին՝ զի թաւալեցուցեալ էր վէմն ի գերեզմանէն, քանզի էր մեծ յոյժ։

Եւ մտեալ ի ներքս ի գերեզմանն տեսին զերիտասարդ մի՝ զի նստէր ընդ աջմէ կողմանէ՝ զգեցեալ պատմուճան սպիտակ. և զարհուրեցան։

Եւ նա ասէ ցնոսա. մի՛ երկնչիք. զՅիսուս խնդրէք զՆազովրեցի զխաչելեալն, յարեաւ՝ չէ աստ. ահաւադիկ տեղին ուր եդին զնա։

Այլ երթայք, ասացէք ցաշակերտս նորա և ցՊետրոս, թէ ահա յառաջագոյն երթայ քան զձեզ ի Գալիլեա. անդ տեսանիցէք զնա՝ որպէս ասացն ձեզ։

Եւ իբրև լուան՝ ելին և փախեան ի գերեզմանէն, քանզի զահի հարեալ էին. և ոչ ումեք ինչ ասացին. զի երկնչէին։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ղուկասու։

Վասն յարութեան Տառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

ակ. պկ. Բայց ի միաշաբաթուն վաղ՝ քաջ ընդ առաւօտն, եկին ի գերեզմանն. բերին զխունկան զոր պատրաստեցին՝ և այլ կանայք ընդ նոսա։

Եւ գտին զվէմն թաւալեցուցեալ ի գերեզմանէ անտի։

Եւ մտեալ ի ներքս՝ ոչ գտին զմարմինն Տեառն Յիսուսի։

Եւ եղև ընդ հիանալն նոցա վասն այնորիկ, և ահա արք երկու հասին առ նոսա ի հանդերձս լուսաւորս։

Եւ իբրև զահի հարան և խոնարհեցուցին զերեսս իւրեանց յերկիր, ասեն ցնոսա. զի խնդրէք զկենդանին ընդ մեռեալս. չէ աստ, այլ յարեաւ։

Յիշեցէք որպէս խօսեցաւ ընդ ձեզ մինչ էրն ի Գալիլեա։

Եւ ասէր՝ թէ պարտ է որդւոյ մարդոյ մատնել ի ձեռս մարդոց մեղաւորաց, ի խաչ ելանել, և յերրորդ աւուր յառնել։

Եւ յիշեցին զբանն նորա։

Եւ դարձան պատմեցին զայս ամենայն մետասանիցն, և այլոցն ամենեցուն։

Եւ էին Մարիամ Մագդաղենացի, և Յովհաննա, և Մարիամ Յակովբայ՝ և այլք ընդ նոսա, որք պատմեցին զայս առաքելոցն։

Եւ երևեցան առաջի նոցա շաղվաղփուԹիւն բանքն նոցա՝ և չհաւատային նոցա։

Բայց Պետրոս յարուցեալ՝ ընթացաւ ի գերեզման, և հայեցեալ տեսանէ զկտաւսն լոկ՝ զի կային. և գնաց ընդ միտս զարմացեալ՝ Թէ զինչ եղև։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Վասն յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

աձ. զձ. Եւ ի միաշաբաթուն Մարիամ Մագդաղենացի գայ առաւօտուն ընդ արշա-

լոյսն ի գերեզման անդր, և տեսանէ զվէմն բարձեալ ի դրանց գերեզմանին։

Ապա ընթանայ և գայ առ Սիմովն Պետրոս՝ և առ միւս աշակերտն՝ զոր սիրէր Յիսուս, և ասէ ցնոսա. բարձին զՏէրն ի գերեզմանէ անտի, և ոչ գիտեմ՝ ուր եդին զնա։

Ել Պետրոս և միւս աշակերտն՝ և գային ի գերեզմանն։

Ընթանային երկոքեան ի միասին. և միւս աշակերտն յառաջեաց ընթացաւ վաղագոյն քան զՊետրոս՝ և եկն նախ ի գերեզմանն։

Եւ խոնարհեալ տեսանէ զի կային անդ կտաւքն, բայց ի ներքս ոչ եմուտ։

Եկն Սիմովն Պետրոս որ գայրն զկնի նորա, և եմուտ ի գերեզմանն. և տեսանէ զկտաւսն զի կային անդ։

Եւ վարշամակն՝ որ էր ի գլուխ նորա, ոչ ընդ այլ կտաւսն կայր, այլ ուրոյն ծալեալ ի մի կողմն։

Յայնժամ եմուտ և միւս աշակերտն. որ եկեալն էր յառաջագոյն ի գերեզմանն. ետես և հաւատաց։

Զի չև ևս գիտէին զգիրս՝ թէ պարտ է նմա ի մեռելոց յառնել։

Զոգան դարձեալ առ միմեանս աշակերտքն։

Բայց Մարիամ կայր արտաքոյ գերեզմանին և լայր. և մինչդեռ լայր՝ խոնարհեցաւ ի գերեզմանն։

Եւ տեսանէ երկուս հրեշտակս ի սպիտակս, զի նստէին մի ի սնարից, և մի յանոտից՝ ուր կայր մարմինն Յիսուսի։

Եւ նոքա ասեն ցնա. կին դու. զի՞ լաս. ասէ ցնոսա. զի բարձին զՏէրն իմ ի գերեզմանէ աստի, և ոչ գիտեմ ո՛ւր եդին զնա։

Զայս իբրև ասաց, դարձաւ ի թիկունս կոյս, և տեսանէ զՅիսուս զի կայր. և ոչ գիտէր թէ Յիսուս իցէ։

Ասէ ցնա Յիսուս. կին դու, զի՞ լաս, զո՞ խնդրես. նմա այսպէս թուեցաւ՝ թէ պարտիզպանն իցէ, ասէ ցնա. Տէ՛ր, եթէ դու բարձեր զնա, ասա՛ ինձ, ո՛ւր եդեր զնա, զի ես առից զնա։

Ասէ ցնա Յիսուս. Մարիա՛մ և նա դարձաւ, և ասէ ցնա Եբրայեցերէն ռաբբունի, որ թարգմանի վարդապետ։

Ասէ ցնա Յիսուս. մի՛ մերձենար յիս, զի չև ևս ելեալ եմ առ Հայր իմ. այլ երթ դու առ եղբայրսն իմ, և ասա՛ ցնոսա. ելանեմ ես առ Հայրն իմ՝ և առ Հայր ձեր, և Աստուածն իմ և Աստուած ձեր։

Գայ Մարիամ Մագդաղենացի՝ և պատմէ աշակերտացն, եթէ ետես նա զՏէր, և զայս ինչ ասաց ցնա։

ԱՒԵՏԱՐԱՆՔ ԻՒՂԱԲԵՐԻՑ

ՅԱՐՈՒԹԵԱՆ ԿԻՒՐԱԿԷԻՑ ՑԵՏ ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Վասն յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

բկ / դկ. *Եւ յերեկոյի շաբաթուն յորում լուսանայր միաշաբաթին, եկն Մարիամ Մագդաղենացի, եւ միւս Մարիամն տեսանել զգերեզմանն։*

Եւ ահա շարժումն մեծ եղեւ. զի հրեշտակ Տեառն իջեալ յերկնից՝ մատուցեալ ի բաց թաւալեցոյց զվէմն ի դրանց անտի, եւ նստէր ի վերայ նորա։

Եւ էր տեսիլ նորա իբրեւ զփայլակն, եւ հանդերձ նորա սպիտակ իբրեւ զձիւն։

Եւ յահէ անտի նորա խռովեցան պահապանքն, եւ եղեն իբրեւ զմեռեալս։

Պատասխանի ետ հրեշտակն եւ ասէ ցկանայսն. մի՛ երկնչիք դուք. գիտեմ զի զՅիսուս զխաչելեալն խնդրէք։

Չէ աստ, քանզի յարեաւ, որպէս ասաց. եկա՛յք եւ տեսէք զտեղին՝ ուր կայր։

Եւ վաղվաղակի երթա՛յք ասացէք աշակերտացն նորա՝ թէ յարեաւ. եւ ահա յառաջանայ քան զձեզ ի Գալիլեա, անդ տեսանիցէք զնա. ահա ասացի ձեզ։

Եւ ելեալ վաղվաղակի ի գերեզմանէ անտի ահիւ եւ խնդութեամբ բազմաւ՝ ընթանային պատմել աշակերտացն։

Եւ ահա պատահեաց նոցա Յիսուս՝ եւ ասէ, ողջ էք. եւ նոքա մատուցեալ կալան զոտս նորա, եւ երկիրպագին նմա։

Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս. մի՛ երկնչիք, երթա՛յք ասացէ՛ք եղբարցն իմոց՝ զի երթիցեն ի Գալիլեա, եւ անդ տեսցեն զիս։

Իբրեւ նոքա գնացին, ահա ոմանք ի զօրականացն եկին ի քաղաքն, եւ պատմեցին քահանայիցն զամենայն՝ որ ինչ եղեն։

Եւ նոքա ժողովեալ հանդերձ ծերովքն, խորհուրդ

առեալ՝ արծաթի յոյժ եւտուն զօրականացն։

Եւ ասեն. ասասջիք՝ եթէ աշակերտքն նորա եկեալ գիշերի, գողացան զնա՝ մինչ մեք ի քուն էաք։

Եւ եթէ լուր լիցի այդ առ դատաւորն, մեք հաճեսցուք զնա, և զձեզ անհոգս արասցուք։

Եւ նոցա առեալ զարծաթին, արարին որպէս ուսանն. և ել համբաւս այս ի Հրէից մինչև ցայսօր։

Իսկ մետասան աշակերտքն գնացին ի Գալիլեա՝ ի լեառնն՝ ուր ժամադիր եղև նոցա Յիսուս։

Իբրև տեսին զնա, երկիրպագին նմա, և ոմանք երկուացան։

Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա և ասէ. տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի. որպէս առաքեաց զիս Հայր, և ես առաքեմ զձեզ։

Գնացէք այսուհետև աշակերտեցէք զամենայն հեթանոս. մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Ուսուցէք նոցա պահել զամենայն՝ զոր ինչ պատուիրեցի ձեզ. և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս՝ մինչև ի կատարած աշխարհի։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մարկոսի։

Վասն թաղման եւ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ իբրև երեկոյ եղև, քանզի ուրբաթ էր՝ որ ի շաբաթին մտանէր։ քա. կա.

Եկեալ Յովսէփ՝ որ Յարեմաթեայն էր, այր պարկեշտ, նախարար, որ և ինքն իսկ ակն ունէր արքայութեան Աստուծոյ, համարձակեցաւ՝ եմուտ առ Պիղատոս, և խնդրեաց զմարմինն Յիսուսի։

Եւ Պիղատոս զարմացաւ թէ այնչափ վաղ մեռաւ. և կոչեցեալ առինքն զհարիւրապետն, եհարց զնա և ասէ, թէ արդարև այնչափ վաղ մեռաւ։

Եւ իբրև ստուգեաց ի հարիւրապետէ անտի, շնորհեաց զմարմինն Յովսէփայ։

Եւ Յովսէփ գնեաց կտաւ, և իջուցեալ զնա՝ պատեաց կտաւովն, և եդ ի գերեզմանի՝ զոր էր փորեալ ի վիմէ, և թաւալեցոյց զվէմ մի ի դուռն գերեզմանին։

Իսկ Մարիամ Մագդաղե-

նացի և Մարիամ Յակովբայ և Յովսեայ տեսին զտեղին ուր եդաւ։

Եւ իբրև էանց շաբաթին, Մարիամ Մագդաղենացի և Մարիամ Յակովբայ և Սողովմէ չոգան պատրաստեցին խունկս, զի եկեսցեն, և օծցեն զնա։

Եւ ընդ առաւօտս միշաբաթուն գան ի գերեզմանն ընդ արևագալն։

Եւ ասէին ցմիմեանս. ո՞վ թաւալեցուսցէ մեզ զվէմն ի դրանց գերեզմանին։

Եւ հայեցեալ տեսին՝ զի թաւալեցուցեալ էր վէմն ի գերեզմանէն. քանզի էր մեծ յոյժ։

Եւ մտեալ ի ներքս ի գերեզմանն տեսին զերիտասարդ մի՝ զի նստէր ընդ աջմէ կողմանէ՝ զգեցեալ պատմուճան ապիտակ. և զարհուրեցան։

Եւ նա ասէ ցնոսա. մի՛ երկնչիք. զՅիսուս խնդրէք զՆազովրեցի խաչելեալն, յարեաւ՝ չէ աստ. ահաւադիկ տեղին ուր եդին զնա։

Այլ երթայք, ասացէք յաշակերտս նորա և ցՊետրոս, թէ ահա յառաջագոյն երթայ քան զձեզ ի Գալիլեա, անդ տեսանիցէք զնա՝ որպէս ասացն ձեզ։

Եւ իբրև լուան՝ ելին և փախեան ի գերեզմանէն, քանզի զահի հարեալ էին. և ոչ ումեք ինչ ասացին. զի երկնչէին։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ղուկասու։

Վասն թաղման եւ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

ակ. Եւ ահա այր մի, անուն Յովսէփ, որ էր նախարար՝ այր բարեգործ և արդար։ գկ.

Սա՝ չէր վիաբանեալ ընդ խորհուրդս և ընդ գործս նոցա. Յարեմաթեայ քաղաքէ հրէից, որ և ինքն իսկ՝ ակն ունէր արքայութեանն Աստուծոյ։

Սա՝ մատուցեալ առ Պիղատոս՝ խնդրեաց զմարմինն Յիսուսի։

Եւ իջուցեալ զնա՝ պատեայ պաստառակալաւ, և եդ ի կուռծոյ գերեզմանին. ուր չէր ոք բնաւ եդեալ։

Եւ օրն էր ուրբաթ, և շաբաթ լուսանայր։

Եւ երթային զհետ նորա կանայք՝ որք եկեալ էին ընդ նմա ի Գալիլէէ. տեսին զգերեզմանն, և որպէս եդաւ մարմին նորա։

Դարձան, և պատրաստեցին խունկս և իւղս. և ի շաբաթուն հանդարտեցին ըստ պատուիրանին։

Բայց ի միաշաբաթուն վաղ՝ քակ ընդ առաւօտն, եկին ի գերեզմանն. բերին զխունկսն զոր պատրաստեցին և այլ կանայք ընդ նոսա։

Եւ գտին զվէմն թաւալեցուցեալ ի գերեզմանէ անտի։

Եւ մտեալ ի նեղքս՝ ոչ գտին զմարմին Տեառն Յիսուսի։

Եւ եղև ընդ հիանալն նոցա վասն այնորիկ, և ահա արք երկու հասին առ նոսա ի հանդերձս լուսաւորս։

Եւ իբրև զահի հարան և խոնարհեցուցին զերեսս իւրեանց յերկիր, ասեն ցնոսա. զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս. չէ աստ, այլ յարեաւ։

Յիշէք որպէս խօսեցաւ ընդ ձեզ մինչ էին ի Գալիլեա։

Եւ ասէր՝ թէ պարտ է որդւոյ մարդոյ մատնել ի ձեռս մարդոյ մեղաւորաց, և ի խաչ ելանել, և յերրորդ աւուր յառնել։

Եւ յիշեցին զբանն նորա։

Եւ դարձան պատմեցին զայս ամենայն մեսսանիցին, և այլոցն ամենեցուն։

Եւ էին Մարիամ մագդաղենացի, և Յովհաննա, և Մարիամ Յակովբայ՝ և այլք ընդ նոսա, որք պատմեցին զայս առաքեալոցն։

Եւ երևեցան առաջին նոցա շաղփաղփութիւն բանք նոցա՝ և չհաւատային նոցա։

Բայց Պետրոս յարուցեալ՝ ընթացաւ ի գերեզմանն, և հայեցեալ տեսանէ զկտաւսն լոկ՝ զի կային. և գնաց ընդ միտս զարմացեալ՝ թէ զինչ եղև։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Վասն թաղման եւ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Յետ այսորիկ աղաչեաց զՊիղատոս Յովսէփ, որ Յարեմաթեայ էր աշակերտ Յիսուսի ի ծածուկ՝ վասն ահին Հրէից, զի բարձցէ զմարմինն Յիսուսի. և հրամայեաց Պիղատոս. եկին և բարձին զնա։ ա֊ճ. գ֊ձ.

Եկն Նիկոդիմոս՝ որ եկեալն էր առ Յիսուս ի գիշերի զառաջինն, և եբեր զմուռս խառն ընդ հալուէս իբրև լաւերս հարիւր։

Առին զմարմինն Յիսուսի, և պատեցին կտաւովք՝ խըն-

կովքն հանդերձ, որպէս օրէնն էր Հրեից պատել։

Եւ էր ի տեղւոջն յորում խաչեցաւ՝ պարտէզ. և ի պարտիզի անդ գերեզման նոր, յորում ոչ ոք էր եդեալ։

Անդ վասն ուրբաթուն Հրէից՝ զի մօտ էր գերեզմանն՝ եդին զՅիսուս։

Եւ ի միաշաբաթուոջն Մարիամ Մագդաղենացի գայ առաւօտուն ընդ արշալոյսն ի գերեզման անդր, և տեսանէ զվէմն բարձեալ ի դրանց գերեզմանին։

Ապա ընթանայ և գայ առ Սիմովն Պետրոս՝ և առ միւս աշակերտն՝ զոր սիրէր Յիսուս, և ասէ. ցնոսա. քարձին զՏէրն ի գերեզմանէ անտի, և ոչ գիտեմ՝ ուր եդին զնա։

Ել Պետրոս և միւս աշակերտն՝ և գային ի գերեզմանն։

Ընթանային երկոքեան ի միասին. և միւս աշակերտն յառաջեաց ընթացաւ վաղագոյն քան զՊետրոս՝ և եկն ի գերեզմանն։

Եւ խոնարհեալ տեսանէ՝ զի կային անդ կտաւքն, բայց ի ներքս ոչ եմուտ։

Եկն Սիմովն Պետրոս՝ որ գայրն զկնի նորա, և եմուտ ի գերեզմանն. և տեսանէ զկտաւսն զի կային անդ։

Եւ վարշամակն՝ որ էր ի գլուխ նորա, ոչ ընդ այլ կտաւսն կայր, այլ ուրոյն ծալեալ ի մի կողմն։

Յայնժամ եմուտ և միւս աշակերտն, որ եկեալն էր յառաջագոյն ի գերեզմանն. և տես և հաւատաց։

Զի չէ՛ւ ևս գիտէին զգիրս՝ թէ պարտ է նմա ի մեռելոց յառնել։

Զոգան դարձեալ առ ի՛ւրեանս աշակերտքն։

Բայց Մարիամ կայր արտաքոյ գերեզմանին և լայր. և մինչդեռ լայր՝ խոնարհեցաւ ի գերեզմանն։

Եւ տեսանէ երկուս հրեշտակս ի սպիտակս, զի նստէին մի ի մնարից, և մի յանուտից՝ ուր կայր մարմինն Յիսուսի։

Եւ նոքա ասեն ցնա. կի՛ն դու. զի լաս. ասէ ցնոսա. զի քարձին զՏէրն իմ՝ ի գերեզմանէ աստի, և ոչ գիտեմ ո՛ւր եդին զնա։

Զայս իբրև ասաց, դարձաւ ի թիկունս կոյս, և տեսանէ զՅիսուս զի կայր. և ոչ գիտէր թէ Յիսուս իցէ։

Ասէ ցնա Յիսուս. կի՛ն դու, զի լաս, զո՞ խնդրես. նմա այսպէս թուեցաւ՝ թէ պարտիզպանն իցէ, ասէ ցնա. Տէր,

եթէ դու քարձեր գնա, ասա ինձ, ուր եդեր գնա, զի ես առից գնա։

Ասէ ցնա Յիսուս. Մարիամ և նա դարձաւ, և ասէ ցնա Եբրայեցերէն րաբունի, որ թարգմանի վարդապետ։

Ասէ ցնա Յիսուս. մի ուերձենար յիս, զի չև ես ելեալ եմ առ Հայրն իմ։ այլ երթ դու առ եղբարս իմ։ և ասա ցնոսա. ելանեմ ես առ Հայրն իմ՝ և առ Հայր ձեր, և Աստուածն իմ և Աստուած ձեր։

Գայ Մարիամ Magdalենացի՝ և պատմէ աշակերտացն, եթէ եսես նա զՏէր, և զայս ինչ ասաց ցնա։

ԱՒԵՏԱՐԱՆ ԴՌՆԱԲԱՑԷՔԻ

ԶՈՐ ԸՆԹԵՌՆՈՒԹԻՒՆ Ի ՎԵՐԱՅ ԲԵՄԻՆ

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս:

Եւ Յիսուս աղաղակէր և ասէր. որ հաւատայ յիս, ոչ հաւատայ յիս, այլ յայն՝ որ առաքեացն զիս. և որ տեսանէ զիս, զայն տեսանէ՝ որ առաքեացն զիս։

Ես լոյս՝ յաշխարհ եկի, զի ամենայն որ հաւատայ յիս, ի խաւարի մի՛ մնասցէ։

Եւ եթէ ոք լուիցէ բանից իմոց և ոչ պահեսցէ, ես ոչ դատեմ զնա, քանզի ոչ եկի թէ դատեցայց զաշխարհ, այլ զի փրկեցից զաշխարհ։

Որ անարգէ զիս, և ոչ ընդունի զբանս իմ, գոյ՝ որ դատէ զնա. բանն զոր ես խօսեցայ՝ նա դատէ զնա յաւուրն յետնում։

Զի ես յանձնէ իմմէ ոչ խօսեցայ, այլ որ առաքեացն զիս Հայր՝ նա ետ ինձ պատուէր՝ զինչ ասացից և զինչ խօսեցայց։

Եւ գիտեմ եթէ պատուէրն այն կեանքեն յաւիտենականք. արդ զոր եան խօսիմ, որպէս ասաց ինձ Հայրն, այնպէս խօսիմ։

ԱՒԵՏԱՐԱՆ ՈՏՆԱԼՈՒԱՑԻ

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ յորժամ լուաց զոտս նոցա, առ զհանդերձանս իւր՝ և դարձեալ բազմեցաւ, և ասէ ցնոսա. գիտէք զինչ արարի ձեզ։

Դուք կոչէք զիս վարդապետ և Տէր, բարւոք առնէք, քանզի եմ իսկ։

Իսկ արդ՝ եթէ ես լուացի զոտս ձեր՝ տէրս և վարդապետս, և դուք պարտիք զմիմեանց ոտս լուանալ։

Զի օրինակ մի ետու ձեզ, զի որպէս ես ձեզ արարի և դուք առնիջիք։



Աւետարանք Չկնի Պատարագի

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Ի Հօրէ լուսոյ։

Սկզբանն էր Բանն, և Բանն էր առ Աստուած, և Աստուած էր Բանն։

Նա էր ի սկզբանէ առ Աստուած։

Ամենայն ինչ նովաւ եղև, և առանց նորա եղև և ոչինչ՝ որ ինչ եղևն։

Նովաւ կեանք էր, և կեանքն էր լոյս մարդկան։

Եւ լոյսն ի խաւարի անդ լուսաւորէր, և խաւար նմա ոչ եղև հասու։

Եղև այր մի առաքեալ յԱստուծոյ, անուն նմա Յովհաննէս։

Սա եկն ի վկայութիւն զի վկայեսցէ վասն լուսոյն. զի ամենեքին հաւատասցեն նովաւ։

Ոչ էր նա լոյսն, այլ զի վկայեսցէ վասն լուսոյն։

Էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւորէ զամենայն մարդ՝ որ գալոց է յաշխարհ։

Յաշխարհի էր, և աշխարհ նովաւ եղև, և աշխարհ զնա ոչ ծանեաւ։

Յիւրսն եկն, և իւրքն զնա ոչ ընկալան։

Իսկ որք ընկալանն զնա,ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել՝ որոց հաւատասցեն յանուն նորա։

Որք ոչ յարեանէ, և ոչ ի կամաց մարմնոյ՝ և ոչ ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան։

Եւ Բանն մարմին եղև և բնակեցաւ ի մեզ. և տեսաք զփառս նորա՝ զփառս իբրև զմիածնի առ ի Հօրէ լի շնորհօք և ճշմարտութեամբ։

Յովհաննէս վկայեաց վասն նորա, աղաղակեաց և ասէ. սա է զորմէ ասէի, որ զկնի իմ գալոցն էր, առաջի իմ եղև, զի նախ քան զիս էր։

Զի ի լրութենէ անտի նորա մեք ամենեքին առաք շնորհս փոխանակ շնորհաց։

Զի օրէնք ի ձեռն Մովսիսի

տուան. շնորհքն և ճշմարտութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Ամէն ամէն ասեմ ձեզ. զի որ հաւատայ, ընդունի զկեանն յաւիտենական։

Ես եմ հացն կենաց։

Հարքն ձեր կերին զմանանայն յանապատին՝ և մեռան։

Այս է հացն, որ յերկնից իջեալ է. զի որ ուտիցէ զբ ի մանէ՝ մի մեռանիցի։

Ես եմ հացն կենդանի՝ որ յերկնից իջեալ։

Եթէ ոք ուտիցէ ի հացէ յայսմանէ՝ կեցցէ ի յաւիտեան. և հացն, զոր ես տայ՝ մարմին իմ է, զոր ես տայ վասն կենաց աշխարհի։

ՉՈՐԵՔԻՆ

ԱՒԵՏԱՐԱՆՔ ԱՆԴԱՍՏԱՆԻ

ԶԿՆԻ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ, ՅԵՒՈՒՐ ՏՕՆԻ ՔԱՌԱՍՆՕՐԵԱՅ ԳԱԼՍՏԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ Ի ՏԱՃԱՐՆ։

Առաջին աւետարան, զոր ընթեռնուցուն յարևմտեան կուսէ դէպ յարևելս։

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս. ոչ եկի լուծանել՝ այլ լնուլ։

Ամէն ամէն ասեմ ձեզ՝ մինչև անցցեն երկինք և երկիր, յովտ մի՝ որ նշանախեց մի է, ոչ անցցէ յօրինացն և ի մարգարէից՝ մինչև ամենայն եղիցի։

Որ ոք լուծցէ մի ինչ ի պատուիրանացս յայսցանէ ի փոքունց, և ուսուսցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայութեան երկնից։

Իսկ որ արասցէ և ուսուսցէ, նա մեծ կոչեսցի յարքայութեան երկնից։

Բայց ասեմ ձեզ. զի եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր աւելի քան զդպրացն և զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից։

Երկրորդ աւետարան՝ յարևելեան կուսէ դէպ յարևմուտս։

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մարկոսի։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Այլ վասն աւուրն այնորիկ և ժամու՝ ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակք յերկինս՝ և ոչ որդի, բայց միայն Հայր։

Զգոյշ եղերուք, հսկեցէք՝ և կացէք յաղօթս, զի ոչ գիտէք երբ ժամանակն իցէ։

Որպէս այր մի գնացեալ ի տար աշխարհ, թողուցու զտունն իւր, և տայցէ ծառայից իւրոց իշխանութիւն, և

իւրաքանչիւր զգործս իւր. և դնանապանին պատուէր տայցէ՝ զի արթուն լինիցի։

Արդ՝ արթուն կացէք, զի ոչ գիտէք երբ տէր տանն գայցէ, յերեկորեայ, եթէ ի մէջ գիշերի, եթէ ի հաւախօսի, եթէ ընդ առաւօտս, գուցէ եկեալ յանկարծակի՝ գտանիցէ զձեզ ի քուն։

Բայց զոր ձեզ ասեմ, ամենեցուն ասեմ՝՝ արթուն կացէք։

Երրորդ աւետարան ի հիւսիսային կուսէ դէպ ի հարաւ։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ղուկասու։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Շուր եկի արկանել յերկիր. և զինչ. կամիմ թէ արդէն իսկ բորբոքեր։

Եւ մկրտութիւն մի ունիմ մկրտել, և զիա՞րդ, փութամ մինչև կատարեսցի։

Համարիք, եթէ խաղաղութիւն եկի տալ յերկիր. ոչ, ասեմ ձեզ, այլ՝ բաժինս։

Զի եղիցին յայսմ հետէ հինգ ի տան միում բաժանեալք, երեքն՝ յերկուս, և երկուքն՝ յերիս։

Բաժանեսցի հայր յորդւոյ, և որդի ի հօրէ. մայր ի դստերէ, և դուստր ի մօրէ, սկեսուր ի հարսնէ, և հարսն ի սկեսրէ իւրմէ։

Ասայ և ցժողովուրդսն. յորժամ տեսանիցէք ամպ ծագեալ յարևմտից՝ իսկոյն ասէք՝ թէ անձրև գայ, և լինի այնպէս։

Եւ յորժամ հարաւ շնչեալ, ասէք՝ թէ խորշակ լինի, և լինի այնպէս։

Կեղծաւորք՝ զերեսս երկնի և երկրի գիտէք փորձել, իսկ զժամանակս զայս զիա՞րդ ոչ փորձէք։

Ընդէ՞ր և յանձանց իսկ ոչ ընտրէք զարժանն։

Յորժամ երթայցես ընդ ոսոխի քում առ իշխան, ի ճանապարհի տուր զհաշիւն՝ զերծանել ի նմանէ, զի գուցէ քարշիցէ զքեզ առ դատաւորն, և դատաւորն մատնիցէ դահճի, և դահիճն արկանիցէ ի բանտ։

Ասեմ քեզ, ոչ ելանիցես անտի՝ մինչև հատուցանիցես զյետին քնիոնն։

Չորրորդ Աւետարան՝ի հարաւային կուսէ ղէպ ի հիւսիս։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Ի Հօրէ լուսոյ։

Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Աստուած, և Աստուած էր Բանն. Նա էր ի սկզբանէ առ Աստուած։

Ամենայն ինչ նովաւ եղև, և առանց նորա եղև և ոչինչ՝ որ ինչ եղևն։

Նովաւ կեանք էր, և կեանքըն էր լոյս մարդկան, և լոյսն ի խաւարի անդ լուսաւորէր, և խաւար նմա ոչ եղև հասու։

Եղև այր մի առաքեալ յԱստուծոյ, անուն նմա Յովհաննէս։

Սա եկն ի վկայութիւն՝ զի վկայեսցէ վասն լուսոյն, զի ամենեքին հաւատասցեն նովաւ։

Ոչ էր նա լոյսն, այլ զի վկայեսցէ վասն լուսոյն։

Էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւորէ զամենայն մարդ՝ որ գալոց է յաշխարհս։

Յաշխարհի էր, և աշխարհ նովաւ եղև, և աշխարհ զնա ոչ ծանեաւ։

Յիւրսն եկն, և իւրքն զնա ոչ ընկալան. իսկ որք ընկալան զնա՝ ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել, որոց հաւատասցեն յանուն նորա։

Որք ոչ յարենէ, և ոչ ի կամաց մարմնոյ, և ոչ ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան։

Եւ Բանն մարմին եղև, և բնակեցաւ ի մեզ։ Եւ տեսաք զփառս նորա, զփառս իբրև զմիածնի առ ի Հօրէ, լի շնորհօք և ճշմարտութեամբ։

Յովհաննէս վկայեաց վասն նորա, աղաղակեաց և ասէ. սա է՝ զորմէ ասէի, որ զկնի իմ գալոցն էր, առաջի իմ եղև, զի նախ քան զիս էր։

Զի ի լրութենէ անտի նորա՝ մեք առաք շնորհս փոխանակ շնորհաց։

Զի օրէնքն ի ձեռն Մովսիսի տուան, շնորհքն և ճշմարտութիւնն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն։

ՉՈՐԵՔԻՆ

ԱՒԵՏԱՐԱՆՔ ԱՆԴԱՍՏԱՆԻ

ՅԱՒՈՒՐ ՏՕՆԻ Ս· ՋԱՏԿԻ։

Առաջին Աւետարան՝ զոր ընթեռնուցուն յարևմտեան կուսէ դէպ յարևելս։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Վասն թաղման եւ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Յետ այսորիկ աղաչեաց զՊիղատոս Յովսէփ, որ Յարեմաթեայ էր, աշակերտ Յիսուսի ի ծածուկ վասն ահին Հրէից, զի բարձցէ զմարմինն Յիսուսի, և հրամայեաց Պիղատոս· եկին և բարձին զնա։

Եկն և Նիկոդէմոս՝ որ եկեալն էր առ Յիսուս՝ ի գիշերի զառաջինն, և եբեր զմուռս խառն ընդ հալուէս՝ իբրև լտերս հարիւր։

Առին զմարմինն Յիսուսի, և պատեցին կտաւովք լնկովքն հանդերձ, որպէս օրէն էր Հրէից պատել։

Եւ էր ի տեղւոջն յորում խաչեցաւ՝ պարտէզ, և ի պարտիզի անդ գերեզման նոր, յորում ոչ ոք երբէք էր եդեալ։

Անդ վասն ուրբաթուն Հրէից, զի մօտ էր գերեզմանն՝ եդին զՅիսուս։

Երկրորդ Աւետարան՝ յարևելեան կուսէ դէպ յարևմուտս։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ղուկասու։

Վասն թաղման եւ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ ահա այր մի, անուն Յովսէփ, որ էր նախարար՝ այր բարեգործ և արդար։ Սա՝ չէր միաբանեալ ընդ խորհուրդս և ընդ գործս նոցա, յԱրեմաթեայ քաղաքէ Հրէից, որ և ինքն իսկ ակն ունէր արքայութեան Աստուծոյ։ Սա մատուցեալ առ Պիղատոս՝ խնդրեաց զմարմինն Յիսուսի։ Եւ իջուցեալ զնա՝

պատեաց պաստառակալաւ, և եդ ի կուածոյ գերեզմանին, ուր չէր ոք քնաւ եդեալ։

Եւ օրն էր ուրբաթ, և շաբաթ լուսանայր։ Եւ երթային զհետ նորա կանայք՝ որ եկեալ էին ընդ նմա ի Գալիլէէ, տեսին զգերեզմանն, և որպէս եդաւ մարմինն նորա։

Դարձան և պատրաստեցին խունկս և իւղս, և ի շաբաթուն հանգաւրտեցին վասն պատուիրանին։

Երրորդ Աւետարան՝ ի հիւսիսային կուսէ դէպ ի հարաւ։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մարկոսի։

Վասն թաղման եւ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ իբրև երեկոյ եղև, քանզի ուրբաթ էր՝ որ ի շաբաթին մտանէր, եկեալ Յովսէփ, որ Յարեմաթեայն էր, այր պարկեշտ, նախարար, որ և ինքն իսկ ակն ունէր արքայութեանն Աստուծոյ, համարձակեցաւ՝ եմուտ առ Պիղատոս, և խնդրեաց զմարմինն Յիսուսի։

Եւ Պիղատոս զարմացաւ, թէ այնչափ վաղ մեռաւ. և կոչեցեալ առ ինքն զհարիւրապետն, եհարց զնա և ասէ, թէ արդարև՝ այնչափ վաղ մեռաւ։

Եւ իբրև ստուգեաց ի հարիւրապետէ անտի, շնորհեաց զմարմինն Յովսէփայ։

Եւ Յովսէփ գնեաց կտաւ, և իջուցեալ զնա՝ պատեաց կտաւովն, և եդ ի գերեզմանի՝ զոր էր փորեալ ի վիմէ, և թաւալեցոյց վէմ մի ի դուռն գերեզմանին։

Իսկ Մարիամ Մագդաղենացի և Մարիամ Յակովբայ և Յովսեայ տեսին զտեղին՝ ուր եդաւ։

Եւ իբրև էանց շաբաթն, Մարիամ Մագդաղենացի և Մարիամ Յակովբայ և Սողովմէ՝ չոգան պատրաստեցին խունկս, զի եկեսցեն և օծցեն զնա։

Չորրորդ Աւետարան՝ ի հարաւ կուսէ դէպ ի հիւսիս։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Վասն թաղման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ իբրև երեկոյ եղև, եկն այր մի մեծատուն յԱրեմաթեայ, որում անուն էր Յովսէփ, որ աշակերտեցաւ իսկ Յիսուսի։ Սա մատուցեալ

առ Պիղատոս խնդրեաց զմարմինն Յիսուսի. յայնժամ Պիղատոս հրամայեաց տալ զմարմինն։

Եւ առեալ զմարմինն Յովսէփ՝ պատեաց սուրբ կտաւովք։ Եւ եդ ի նոր գերեզմանի՝ զոր փորեաց ի վիմի. և թաւալեցուցեալ կափարիչ դրան գերեզմանին վէմ մի մեծ՝ և գնաց։

Անդ էր Մարիամ Մագդաղենացի, և միւս Մարիամն, նստէին հանդէպ գերեզմանին։

Եւ ի վաղիւ անդր՝ որ է յետ ուրբաթուն, ժողովեցան քահանայապետքն և փարիսեցիք առ Պիղատոս և ասեն. Տէր, յիշեցաք զի մոլորեցուցիչն այն ասէր մինչ կենդանին էր, թէ յետ երից աւուրց յառնեմ։

Արդ՝ հրամայեա զգուշանալ գերեզմանին մինչև յերից աւուրս, գուցէ եկեալ աշակերտքն գիշերի՝ գողանայցեն զնա. և ասիցեն ժողովրդեանն, թէ յարեաւ ի մեռելոց, և լինիցի յետին մոլորութիւնն չար քան զառաջինն։

Ասէ ցնոսա Պիղատոս. ունիք զզօրականս, երթայք ըզգուշացարուք որպէս և գիտէք։

Եւ նոքա երթեալ զգուշացան գերեզմանին, և կնքեցին զվէմն հանդերձ զօրականօքն։



ՉՈՐԵՔԻՆ
ԱՒԵՏԱՐԱՆՔ ԱՆԴԱՍՏԱՆԻ
ԵՐԵԿՈՅԵԱՆ ԽԱՉՎԵՐԱՑԻ։

Առաջին Սւետարան, զոր ընթեռնուցուն յարևմտեան կուսէ դէպ յարևելս։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ ոչ ոք ել յերկինս, եթէ ոչ որ էջն յերկնից որդին մարդոյ՝ որ էն յերկինս։

Եւ որպէս Մովսէս բարձրացոյց զօձն յանապատի, նոյնպէս բարձրանալ պարտ է որդւոյ մարդոյ։

Զի ամենայն որ հաւատայ ի նա՝ ընկալցի զկեանն յաւիտենականս։

Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զորդին իւր միածին ետու. զի ամենայն՝ որ հաւատայ ի նա՝ մի կորիցէ, այլ ընկալցի զկեանն յաւիտենականս։

Զի ոչ առաքեաց Աստուած զորդի իւր յաշխարհ՝ թէ դատեսցէ զաշխարհ, այլ զի փրկեսցի աշխարհ նովաւ։

Որ հաւատայ ի նա՝ ոչ դատապարտեսցի. և որ ոչ հաւատայ ի նա՝ արդէն իսկ դատապարտեալ է, զի ոչ հաւատաց յանուն միածնի որդւոյն Աստուծոյ։

Եւ այս իսկ է դատաստան, զի լոյս եկն յաշխարհ, և սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս, զի էին գործք իւրեանց չարութեան։

Զի ամենայն որ զչար գործէ՝ ատեայ զլոյս, և ոչ գայ առ լոյսն, զի մի յանդիմանեսցին գործք նորա։

Իսկ որ առնէ զճշմարտութիւն՝ գայ առ լոյսն, զի յայտնի լիցին գործք նորա՝ թէ Աստուծով գործեցան։

Երկրորդ Աւետարան՝ յարևելեան կուսէ դէպ յարևմուտս։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Զի որպէս փայլակն՝ որ ելանէ յարևելից և երևի մինչև յարևմուտս, այնպէս եղիցի գալուստն որդւոյ մարդոյ։

Զի ուր գէշն իցէ, անդր ժողովեսցին արծուիք։

Վաղվաղակի յետ նեղութեան աւուրցն այնոցիկ՝ արեգակն խաւարեսցի, և լուսին ոչ տացէ զլոյս իւր, և աստեղք անկցին յերկնից, և զօրութիւնք երկնից շարժեսցին։

Եւ ապա երևեսցի նշան որդւոյ մարդոյ յերկինս, և յայնժամ կոծեսցին ամենայն ազգք երկրի, և տեսցեն զորդի մարդոյ եկեալ ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ և փառօք բազմօք։

Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ, և ժողովեսցեն զընտրեալս նորա ի չորից հողմոց՝ ի ծագաց երկնից մինչև ի ծագս նոցա։

Ի թզենւոյ անտի ուսարուք զառակն, զի յորժամ նորա ոստքն կակղասցին և տերևն ցցուիցի, գիտէք թէ մերձ է ամառն։

Նոյնպէս և դուք՝ յորժամ տեսանիցէք զայս ամենայն, գիտասջիք թէ մերձ է ի դուրս։

Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս այս, մինչև այս ամենայն եղիցի։

Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ ոչ անցցեն։

Երրորդ Աւետարան՝ ի հիւսիսային կուսէ դէպ ի հարաւ։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մարկոսի։

Վասն չարչարանաց եւ խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ ածին զնա առ Յակոբ, զի ի խաչ հանցեն զնա։ Եւ ունէին պահակ զՍիմովն Կիւրենացի՝ որ ընդ այն անցանէր՝ եկեալ յագարակէ, զհայրն Աղէքսանդրի և Ռուփայ, զի բարձցէ զխաչափայտն նորա։

Եւ ածեն զնա ի Գողգոթայ՝ տեղի մի, որ թարգմանի՝ տեղի կառափելոյ։

Եւ տային նմա գինի զմռուսեալ, և նա ոչ էառ։ և հանին զնա ի խաչ։

Եւ իբրև խաչեցին զնա՝ բա-

ժանեցին զհանդերձս նորա, արկեալ վիճակս ի վերայ՝ թէ ո՞ զինչ առնուցու։

Էր ժամ երրորդ՝ և հանին զնա ի խաչ։ Եւ էր գիր վնասու նորա գրեալ, թէ Թագաւոր է Հրէից։

Զորրորդ Աւետարան՝ ի հարաւ կուսէ դէպ ի հիւսիս։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Յովհաննու։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ։

Մի խռովեսցին սիրտք ձեր, այլ հաւատացէք յԱստուած, և յիս հաւատացէք։ Ի տան Հօր իմոյ օթևանք բազում են. ապա թէ ոչ՝ ասացեալ էր իմ ձեզ, եթէ երթամ և պատրաստեմ ձեզ տեղի։

Եւ եթէ երթամ և պատրաստեմ ձեզ տեղի, դարձեալ գամ և առնում զձեզ առ իս. զի ուր եմն իցեմ, և դուք անդ իցէք։ Եւ ուր երթամն՝ գիտիցէք, և զճանապարհն գիտիցէք։

Ասէ ցնա Թովմաս. Տէր, ոչ գիտեմք յո՞ երթաս, և զիա՞րդ զճանապարհն կարասցուք գիտել։

Ասէ ցնա Յիսուս. Ես եմ ճանապարհն և ճշմարտութիւն և կեանք. ոչ ոք գայ առ Հայր, եթէ ոչ ինձ։

Եթէ զիս գիտէիք, ապա և զՀայրն իմ գիտէիք, և այսուհետև գիտասջիք զնա, և տեսեք զնա։

Ասէ ցնա Փիլիպպոս. Տէր, ցոյց մեզ զՀայր՝ և շատ է մեզ։

Ասէ ցնա Յիսուս. այսչափ ժամանակս ընդ ձեզ եմ, և ո՞չ ծանեար զիս, Փիլիպպէ. որ տեսս զիս՝ տեսս զՀայրն. և դու զիա՞րդ ասես՝ եթէ ցոյց մեզ զՀայր։

Ո՞չ հաւատաս եթէ ես ի Հայր և Հայր յիս է. բանն՝ զոր ես խօսիմ ընդ ձեզ, ոչ եթէ յանձնէ ինչ խօսիմ, այլ Հայրն՝ որ յիս բնակեալ է, նա գործէ զգործսն։

Հաւատայք ինձ, եթէ ես ի Հայր և Հայր յիս. ապա թէ ոչ՝ գոնէ վասն գործոցն հաւատայէք ինձ։

Ամէն ամէն ասեմ ձեզ, թէ որ հաւատայն յիս, զգործս զոր ես գործեմ, և նա գործեսցէ, և մեծամեծս ևս քան զնոսս գործեսցէ. զի ես առ Հայր երթամ։

Եւ զոր ինչ խնդրիցէք յանուն իմ, արարից զայն. զի փառաւորեսցի Հայր յորդի։

ԱՒԵՏԱՐԱՆ

ԵՐԵԿՈՅԵԱՆ ՃՐԱԳԱԼՈՅՑԻ Ս. ԾՆՆԴԵԱՆ՝ ԶՈՐ ԸՆԹԵՐՆՈՒՑՈՒՆ Ի ՍԵՂԱՆԱՏԱՆ ՅԵՏ ԱՒԱՐՏՄԱՆ ՊԱՏԱՐԱԳԻՆ։

Սրբոյ աւետարանին Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ղուկասու։

Ի ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ հովիւքն էին ի տեղւոջն յայնմիկ բացօթեայք, որք պահէին զպահպանութիւնս գիշերոյ հօտից իւրեանց։

Եւ հրեշտակ Տեառն երեւեցաւ նոցա, և փառք Տեառն ծագեցին առ նոսա, և երկեան երկիւղ մեծ։

Եւ ասէ ցնոսա հրեշտակն. մի երկնչիք, զի ահաւասիկ աւետարանեմ ձեզ զուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանն։

Զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է Օծեալ Տէր, ի քաղաքի Դաւթի։

Եւ այս նշանակ ձեզ, գըտանիցէք մանուկ պատեալ ի խանձարուրս, և եդեալ ի մըսուրս։

Եւ յանկարծակի եղև ընդ հրեշտակին ընդ այնմիկ բազմութիւն զօրաց երկնաւորաց, որ օրհնէին զԱստուած և ասէին։

Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն։



ԱԻԵՏԱՐԱՆ

ԵՐԿՈՅԵԱՆ ԱՐԱԳԱԼՈՒԹԻ Ս· ՅՈՎՀՈՒԹԵԱՆ ԶԱՏԿԻ, ԶՈՐ ԸՆԹԵՌՆՈՒԹՅՈՒՆ Ի ՍԿԶԱՆԷՏԱՆ ՅԵՏ ԱՒԱՐՏՄԱՆ ՊԱՏԱՐԱԳԻՆ։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Վասն յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Իսկ մետասան աշակերտքըն գնացին ի Գալիլիա՝ ի լեառնն՝ ուր ժամադիր եղև նոցա Յիսուս։ Իբրև տեսին զնա՝ երկիր պագին նմա, և ոմանք երկուացան։

Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա և ասէ. տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի. որպէս առաքեաց զիս Հայր, և ես առաքեմ զձեզ։

Գնացէք այսուհետև՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։

Ուսուցէք նոցա պահել զամենայն՝ զոր ինչ պատուիրեցի ձեզ։ Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս՝ մինչև ի կատարած աշխարհի։



ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ԳԻՇԵՐԻՆ ՆԱԽ ՔԱՆ ԶՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ ԸՆԹԵՐՆՈՒՑՈՒՆ ԶԱՅՍ ԱՒԵՏԱՐԱՆ Ի ԲԵՄԻՆ

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ղուկասու:

Ի ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Եւ հովիւքն էին ի տեղւոջն յայնմիկ բացօթեայք, որք պահէին զպահպանութիւնս գիշերոյ հօտից իւրեանց:

Եւ հրեշտակ Տեառն երեւեցաւ նոցա, եւ փառք Տեառն ծագեցին առնոսա, եւ երկեան երկիւղ մեծ:

Եւ ասէ ցնոսա հրեշտակն. մի երկնչիք, զի ահաւասիկ աւետարանեմ ձեզ զուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանն:

Զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է Օծեալ Տէր, ի քաղաքի Դաւթի:

Եւ այս նշանակ ձեզ, գըտանէք մանուկ պատեալ ի խանձարուր, եւ եդեալ ի մըսուրս:

Եւ յանկարծակի եղեւ ընդ հրեշտակին ընդ այնմիկ բազմութիւն զօրաց երկնաւորաց, որ օրհնէին զԱստուած եւ ասէին:

Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն:

Աստանօր երգեցեն զփառք ի բարձունս

Եւ եղեւ իբրեւ վերացան ի նոցանէ հրեշտակքն յերկինս, ասեն ցմիմեանս հովիւքն. եկայք երթիցուք մինչեւ ցԲեթղեհէմ, եւ տեսցուք զինչ է բանս այս՝ որ եղեւ, զոր Տէր եցոյց մեզ:

Եւ եկին փութանակի, եւ գտին զՄարիամ եւ զՅովսէփ՝ եւ զմանուկն եդեալ ի մսուր:

Եւ ծանեան վասն բանին որ ասացաւ նոցա զմանկանէն:

Եւ ամենեքին, որ լսէին՝ զարմանային վասն բանիցն՝ զոր խօսեցան ընդ նոսա հովիւքն:

Եւ Մարիամ զամենայն զբանս զայսոսիկ պահէր, եւ խելամուտ լինէր ի սրտի իւրում:

Եւ դարձան հովիւքն՝ փառաւոր առնէին՝ եւ օրհնէին զԱստուած՝ վասն ամենայնի զոր լուան եւ տեսին, որպէս պատմեցաւ նոցա:

ԱՒԵՏԱՐԱՆ ՄԱՂԹԱՆԱՅ

ՁՈՐ ԸՆԹԵՐՆՈՒԹԻՒՆՆ ՅԱՂՈՒԿՍ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՏՕՆԻՑ։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի։

Ա՛ռ Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Յայնժամ գնացեալ փարիսեցիքն, առին խորհուրդ զնմանէ՝ թէ որպէս զնիցեն նմա որոգայթ բանիւք։

Եւ առաքեն առ նա զաշակերտան իւրեանց հերովդիանոսացն հանդերձ՝ և ասեն, վարդապետ՝ գիտեմք զի ճշմարիտ ես, և զճանապարհն Աստուծոյ ճշմարտութեամբ ուսուցանես, և ոչ է քեզ փոյթ զումեքէ, և ոչ հայիս յերեսս մարդոյ։

Արդ՝ ասա մեզ, զիա՞րդ թուի քեզ, պա՞րտ է հարկս տալ կայսեր՝ թէ ոչ։ Գիտաց Յիսուս զխորամանկութիւնն նոցա, և ասէ, զի՞ փորձէք զիս կեղծաւորք։ ցուցէք ինձ զդահեկան հարկին. և նոքա մատուցին նմա դահեկան մի։ Եւ ասէ ցնոսա. ո՞յր է պատկեր այս՝ կամ գիր։ Ասեն կայսեր։ Յայնժամ ասէ ցնոսա. երթայք՝ տուք զկայսերն՝ կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ։ Իբրև լուան՝ զարմացան, և թողին զնա և գնացին։

ՅԱՆԿ

	ԵՐԵՍ
Ա. Աւետարանք Հանգստեան	1.
Բ. Աւետարանք Բժշկութեան	6.
Գ. Աւետարանք Տաճարի	12.
Դ. Աւետարանք Խաչելութեան	17.
Ե. Աւետարանք Իւղաբերիս Մեծի Պահոց . . .	21.
Զ. Աւետարանք Իւղաբերիս Յինանց Պիւրակէից .	23.
Է. Աւետարանք Իւղաբերիս Յարութեան Պիւրակէից յետ Հոգեգալստեան	27.
Ը. Աւետարան Դանաբացէի	33.
Թ. Աւետարան Ոանալուայի	34.
Ժ. Աւետարանք Ձկնի Պատարագի	35.
ԺԱ. Աւետարանք Անդաստանի Քառասնօրեայ Գալստեան	37.
ԺԲ. Աւետարանք Անդաստանի Ս. Ջատկի . . .	40.
ԺԳ. Աւետարանք Անդաստանի Երեկոյեան Խաչվերացի	43.
ԺԴ. Աւետարան Երեկոյեան Ձրագալուցի Ս. Ծննդեան	46.
ԺԵ. Աւետարան Երեկոյեան Ս. Յարութեան . .	47.
ԺԶ. Աւետարան Աստուածայայնութեան Գիշերի, զոր Ընթեռնուն Ձկնի Տէր-Երկնիցին	48.
ԺԷ. Աւետարան Կայսերական Տօնից	49.